

ԴՐՈՒԱԳՆԵՐ ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆԻ
ՓԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԻՑ

Կիլիկիան փառարանուած նկարիչ Թորոս Ռոսլինի վաստակի հու-
մանիստական բովանդակութիւնը, ըստ ամենայնի ըմբռնելու տեսա-
կէտից, ծրագրային նշանակութիւն ունի «Ճաշից իջեցման» թեմայով
նրա ստեղծած պատկերաշարքը:

Աւետարանական այս դրուադը, դարեր շարունակ հանդիսացել
է բարոյական, փեհ մարդասիրական գաղափարների մարմնաւորում:
Այն միջոցներ է ընձեռել արուեստագէտներին արտայայտելու կեան-
քի եւ մահուան ողբերգականութիւնը, մարդկային նուիրուածութիւ-
նը, մայրական սէրը եւ այլն¹:

Պատահական չէ, որ «Ճաշից իջեցման» պատմութիւնը բազմիցս
գրուել է հայ սեւ այլազգի վարպետներին՝ մղել նրանց ստեղծագոր-
ծելու այդ թեմայով²:

Ոնդրոյ առարկայ դրուազի պատկերազրոյթիւնը ձեւաւորուել է
չորս աւետարանների (Մատթէոս, զլ. ԻԷ, 57-60, Մարկոս, զլ. ԺԵ,
42-47, Ղուկաս, զլ. ԻԳ, 50-56, Յովհաննէս, զլ. ԺԹ, 38-42) եւ
պարականոն գրական յուշարձանների տուեալների հիման վրայ:

Դրամատիկ այս իրադարձութիւնը ցուցադրող Ռոսլինի հետ
կապուող արխատանքներից մեզ են հասել տարբեր տարիներին վար-

1. ՊոկրովՍկի Ն., Աւետարանի պատկերազրոյթիւնը գլխաւորապէս բիզանդա-
կան եւ ռուսական յուշարձաններում, *Պատերազմ*, 1892, էջ 386-388 (տուեա-
լէն); MILLET G., *Recherches sur l'icongraphie de l'Evangile aux*
XIV^e, XV^e et XVI^e siècles d'après les monuments de Mistra, de la
Macédoine et du Mont Athos, Paris, 1960, p. 467-488; REAU L., *Ico-*
nographie de l'Art Chrétien, t. 2, Paris, 1957, p. 513-528; BOSKOVITS
M. - JASZAI G. *Kreuzabnahme*. - Im: *Lexikon der christlichen Iko-*
nographie, Rom. Freiburg, Basel, Wien, 1970, Bd. 2, S. 590-595; SCHIL-
LER G., *Christian Iconography*, Vol. 2, London, 1972, p. 164-172.

2. ԶՈՒԳԱՍՁԻՆՆԻ Լ., Մատենադարանի բիւ 5576 ձեռագրի դրուագում կազմի
մասիւմ, *Պատմա-բանասիրական հանդէս*, 1978, թիւ 2, էջ 117-128, նոյնի,
Rubens und die Armenier.- *Wiener Jahrbuch für Kunstgeschichte*,
Bd. XXXII, 1979, Wien-Köln-Graz, S. 41-48.

պետի վրձնած չորս ձեռագրերի մանրանկարները: Բացառուած չէ, որ Ռուսլինը նոյն պատմութիւնը ներկայացնող այլ դործեր ունենար այն մատենաներում, որոնք չեն պահպանուել: Մեզ յայտնի ռուսիներէն հրաշակերտները տարբեր են միմեանցից՝ իրենց պատկերադրական յօրինուածքով, կերպարների թուով, տեղադրութեամբ, զգացմունքային խորութեան յազեցուածութեամբ: Առաջին իսկ հայեացքից պարզ է, որ նկարիչը թեմայի վերաբերեալ ունեցել է յայն դիտելիքներ, եւ ըստ ամենայնի պատրաստուած է եղել այն պատկերելու համար: Ինչպէս միւս գործերի պարագայում, այստեղ եւս նրա գեղարտեստական հմտութիւնը, դիտելիքները նախորդ շրջանի հայ մանրանկարիչների զարգացման մակարդակի օրինաչափ արդիւնքն են:

Յայտնի է, որ նախքան Ռուսլինը, «Սաչից իջեցման» թեմայով պատկերներ են ստեղծել նաեւ ուրիշ հայ վարպետներ: Վերջիններիս գեղարտեստական ժառանգութիւնից կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք հրաշքով փրկուել են, դարերի թոհ ու բոհի միջից հասել մեզ, եւ այսօր գաղափար են տալիս նրանց պատկերադրական ուշադրաւ, միանգամայն իւրայատուկ մտայնացումների մասին:

«Սաչից իջեցման» տեսարանի զարգացման պատմութիւնը քննող արուեստաբանները, Արեւմուտքում եւ Արեւելքում կերտուած հնագոյն օրինակների մէջ առանձնացնում են «Հաւուց Թառի Ամենափրկիչ» կոչուող հայկական փայտակերտ պատկերը³, մեծ կարեւորութիւն տալիս այդ ստեղծագործութեանը, եւ համարում այն՝ Ժ. կամ ԺԱ. դարի աշխատանք⁴:

«Հաւուց Թառի Ամենափրկիչը» քանդակուած է երբեւէ յայտնի ամենահամառօտ կանոնիկ նախօրինակի հիման վրայ⁵: Սովորաբար այս տեսարանի մէջ ընդգրկուող կերպարներից ներկայացուած են միայն Յովսէփ Արիմատեցիին ու Նիկողեմոսը, որոնք աւանդութեան համաձայն՝ Քրիստոսին իջեցնում են խաչից:

Աւելի զարգացած եւ ծաւալուն սրատկերադրութեամբ են բնորոշուում՝ ԺԱ. դարի գործ հանդիսացող երկու հայկական ձեռագրերի մանրանկարները: Պօքը վերաբերում է 1057 թ. Մալաթիա ընդօրինակուած Աւետարանի (Մատենադարան, թ. 3784) եւ անյայտ գըրչատնից ծաղղը, նախկինում միանդալում (Սեբաստիայի շրջան) պահուող 1041 թ. Աւետարանի (Մատենադարան, թ. 3624) ձեւաւորում-

3. MILLET G., *Recherches...*, p. 469, note 1.

4. Տե՛ս նոյն տեղում, DER NERSESSIAN S., *L'Art Arménien des origines au XVII^e siècle*, Paris, 1977, p. 114, fig. 81.

5. ՅՈՎՍԷՓԵԱՆ Գ., Հաւուց Թառի Ամենափրկիչը ևւ Պոյմամում յուշարձաններ հայ արուեստի մէջ, *Երեսուղէմ*, 1937, էջ 35-38

ներին⁶։ Ս. Տէր-Ներսէսեանի վարժիքով այս ձեռագրերը եւ անծանօթ վայրում ստեղծուած երկու այլ մատենաները (որոնց բոլորի մանրանկարները խիստ նման են), ծնունդ են առել Մալաթիա դրոնուող միեանայն գրչատունը։

Պնդրոյ առարկայ աւետարանների յիշատակարանների տուեալների հիման վրայ Տ. Ա. Իզմայլովան գտնում է, որ դրանք ընդօրինակուել են Սեբաստիայի շրջանում, մինչդեռ, ըստ Հ. Բերբերեանի՝ յուշարձանների կատարման տեղը ճիշտ կը լինի փնտուել Մալաթիա, քան Թէ Սեբաստիա⁷։

ԺԱ. դարի նշուած Կերկու ձեռագրերի «Պաչից իջեցման» պատկերները ընդգրկում են ոչ միայն Յովտէփի եւ Նիկողեմոսի, այլ եւ Մարիամի ու Յովհաննէս աւետարանիչի կերպարները։ Մանրանկարներից մէկում վերջիններս մտնում են Գրիստոսի բեւեռներէց ազատուած ցած կարսուած ձեռքերին, միւսում համբուրում դրանք⁸։ Այս նկարների յօրինուածքը հիմք է տալիս ասելու, որ «Պաչից իջեցման» թեմայի պատկերագրութիւնը ԺԱ-ԺԲ. դարերի՝ հայ արուեստում հիմնականում պիտի ձեւաւորուած եւ աւարտուած լինէր։

Հաւանաբար այդ ժամանակաշրջանում եւ ԺԳ. դարում գոյութիւն ունէին «Պաչից իջեցման» թեմայով նաեւ այնպիսի հայկական դործեր, որոնք չեն պահպանուել։ Ոչ միայն այլ ժողովուրդների համանուն աշխատանքների, այլ եւ չպահպանուած հայկական պատկերների ներգործութեամբ պէտք է բացատրել մեզ հետաքրքրող թեմայի առկայութիւնը Թորոս Ռոսլինի ու նրա հետեւորդների մանրանկարներում եւ ԺԳ. դարի 70-80ական թուականների խաչքարերում⁹։

Ռոսլինեան ձեռագրերի չորս պատկերներից երեքում «Պաչից իջեցումը» հանդէս է դալիս «Թաղման» տեսարանի հետ միասին, եւ դրանք բոլորն էլ կրում են «Թաղումն Տեառն» մակագրութիւնը։

Յայտնի է, որ այս երկու թեմաները ըստական յաճախ էին իրար միացում Թ-ԺԱ. դարերի լատինական ձեռագրերի նկարագրում-

6. Նոյմ տեղում, էջ 53-55, պատկ. 29, 30: IZMAILOVA T. A., L'icongraphie du cycle des fêtes d'un groupe de codex arméniens d'Asie Mineure, REA, t. IV, 1967, p. 154-156, fig. 27, 28.

7. Նոյմ տեղում, էջ 125:

8. Նոյմ տեղում, էջ 155:

9. ՅՈՒՍԵՓՅԱՆ Գ. Հաւուց Թառի Ամեմափրկիչը..., էջ 65-70, 74-76, պատկ. 36, 37ա, 37բ, 41, 42: Հայկական խաչքարեր (ալրում), տեքստի հեղինակ Լ. Ռ. Աղաբաբեան, էջմիածին, 1973, նկ. 76-79, 85, 88: Հայկական մանրանկարչութիւն, ներածական յօտուածը եւ նկարների բացատրութիւնները՝ Լ. Ա. Գուռնոյի, խմբագրութիւնը եւ առաջաբանը՝ Ռ. Գ. Դրամբեանի, Երևան, 1967, նկ. 37:

ներում¹⁰: Բացառուած չէ, որ այդ սկզբունքը Արեւմուտք անցած լինէր Արեւելքից, որովհետեւ Գրիգոր Նազիանզացու ճառերը պարունակող 867-886 թթ. բիւզանդական մատենանի (Փարիզ, Աղգային դըրադարան, յուն. 510) մանրանկարում եւ ԺԱ. դ. բիւզանդական նշանաւոր Աւետարանի (Ֆլորենցիա, Լաուրենցեան գրադարան, MS. Plut. VI, 23) պատկերի մէջ ի յայտ է դալիս նոյն երեւոյթը¹¹: Սակայն անհրաժեշտ է նկատել, որ արեւելեան նկարիչները Ժ-ԺԱ. դարերից յետոյ «Ուաչից իջեցումը» միշտ միացնում էին «Ուաչելութեան» հետ¹²: Այս սկզբունքը յատկանշական է ոչ միայն բիւզանդական յուշարձանները, այլ եւ ԺԱ. դարի հայկական մանրանկարները համար¹³: Նման ստեղծագործութիւններին զուգընթաց ԺԱ. դարի կէսից սկսած յօրինուում էին նաեւ «Ուաչից իջեցումը» որպէս առանձին իրադարձութիւն ցուցադրող պատկերներ¹⁴:

Անհրաժեշտ է նշել, որ Ժ. եւ ԺԱ. դարերի առաջին կէսի արեւմրտեան նկարիչները այդ թեման նախ քան «Թաղման» հետ միացընելը, զուգակցում էին «Մարմինը կրելու» դրուագը հետ¹⁵:

«Ուաչից իջեցումը» եւ «Թաղումը» համատեղելիս արեւմտեան, ինչպէս նաեւ արեւելեան վարպետները, շարադրանքը ծաւալում էին կամ ձախից աջ ուղղութեամբ, կամ առաջին տեսարանը տեղադրում էին երկրորդի վերեւում¹⁶: Յայտնի են առանձին օրինակներ, որտեղ տեղի անբաւարար լինելու պատճառով՝ մի գրուագը ներթափանցում է միւսի մէջ¹⁷:

Բայց ռոսպիւնեան երկերը տարբերում են այդ բոլոր յուշարձաններից, իրենց անառիւր լուծումով: Նկարիչը աղաս կերպով է օգտւում յայտնի պատկերագրական կանոններից. նա իր մանրանկարի մէջ ներմուծում է ոչ թէ ողջ «Թաղման» դրուագը, ինչպէս անում են միւս բոլոր վարպետները, այլ ընտրում միայն ոչոչ բաղադրույթ մանրամասներ (գերեզմանը, նստած ողբացող կանայք, եւայլն) եւ

10. SCHILLER G., *Christian Iconography*, p. 165, fig. 544-547.

11. Նոյն տեղում, նկ. 548, 549:

12. MILLET G., *Recherches...*, p. 470.

13. IZMAILOVA T. A., *L'Iconographie du cycle des fêtes...*, fig. 27, 28.

14. SCHILLER G., *Christian Iconography*, p. 166.


15. Նոյն տեղում:

16. WEITZMANN, K., *The Origin of the Threnos*, Byzantine Book Illumination and Ivories, London, 1980, fig. 4, 7, 8, 9; VELMANS T., *La Peinture Murale Byzantine à la fin du Moyen Age*, t. 1, Paris, 1977, fig. 96-98, 117; SCHWEICHER, C., *Grablegung Christi*, Lexikon der christlichen Ikonographie, Rom, Freiburg, Basel, Wien, 1970, Bd. 2, S. 192-196.

17. WEITZMANN K., *The Origin of the Threnos...*, fig. 8; VELMANS T., *La Peinture...*, fig. 96, 117.



Նկ. 1.- «Խաչից իջեցում» 1262 թ. Սեբաստիայի Աւետարանի (Բալիմոր, Վոլբերգ Արուեստի պատկերասրահ, Ջեո - 539) Մանրանկար էջ 125ա, նկարիչ Թորոս Ռոսլին:



Նկ. 2.- «Խաչից իջեցում» 1265 Թ. Աւետարանի (Երուսաղեմ Ս. Յակոբեանց վանքի հաւաքածոյ, Ջնո. 1956)
Մանրանկար էջ 171ա, նկարիչ Թորոս Ռոսլին:

դարանցով լրացնում ստեղծագործութիւնը: Այդ ձեւով են ծնուել կիլիկեցի վարպետի նկարապարզումները:

Իրենց անսովոր մեկնաբանութեամբ ռոսլինեան տարբերակները նոր փուլ են նշանաւորում «Սաչից իջեցման» թեմայի ձեւաւորման պատմութեան մէջ:

ԺԱ. դարի հայ դրքարուեստում արդէն արմատաւորուած կանոնիկ աւանդոյթից հեռանալով, Ռոսլինը, ըստ երեւոյթին, պատկերի ողբերգական լիցքը ասելի շիկացնելու նպատակով, իր երկերի համար նախընտրել է միանգամայն այլ յորինուածք: «Սաչից իջեցումը» միացնելով «Թաղման» հետ, այսինքն՝ կողմնորոշուելով դէպի հին կանոնը, մեծ վարպետը ԺԳ. դարի բիւզանդական մանրանկարիչների նման կուրորէն չի ընդօրինակում նախորդների զեղարուեստական փորձը¹⁸, այլ ստեղծագործարար իւրացնում, վերաիմաստաւորում եւ իր մտայղացմանը ի սպաս է դնում պատկերապարզ կան մանրամասները: Այսպիսով կիլիկեցի ծաղկողը վերածնում է հինաւուրց աւանդոյթը՝ քաջ գիտակցելով երկու թեմաների միացումով ստեղծուող դրամատիկ հնարաւորութիւնները:

«Սաչից իջեցման» հարիւրաւոր տեսարանների շարքում, Ռոսլինի նոյնանուն գործերի տեղը որոշելու համար՝ անհրաժեշտ է պարզել, թէ որքանով է նկարիչը հաւատարիմ դտնուել պատրաստի կանոնիկ յորինուածքներին, որ յուշարձանների հետ է աղբւրսում նրա պատկերաշարքը, եւ որոնք են նրա բերած նորամուծութիւնները: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է մէկ առ մէկ քննել մեծ վարպետի տունալ թեմայով կատարած մանրանկարները:

Ժամանակադրական իմաստով դրանցից հնագոյնը 1262 թ. Սեբաստիայի Աւետարանի (Բալթիմոր, Վոյթերս Արուեստի պատկերասրահ, 539) ձեւաւորումն է (էջ 125ա)¹⁹: Այդ ձեւապիւրը Թորոս Ռոսլինը ընդօրինակել եւ նկարապարզել է Թորոս քահանայի՝ Կաթողիկոս Կոստանդին Ա. Բարձրբերդուու և Ղրօրօրու պատուէրով:

Սեբաստիայի Աւետարանի պատկերում (նկ. 1) կենտրոնական կերպարն է Յովսէփ Արիմաթեցին, որ պահում է Քրիստոսի անշունչ մարմինը դատկատեղից բռնած, մինչև որ Նիկողեմոսը գուրս կը քաշի ուսուցչի ոտքերի բեւեռները: Յովսէփի կողքին կանգնած է Մարիամը: Վերջինս զբոսնում է որդուն մէջքի կողմից եւ մօտեցնում դէմքը նրա դէմքին: Նիկողեմոսից վերեւ՝ մանրանկարի ալ մասում տեսանելի է ողբացող Յովհաննէսը: Պատկերի ներքեւի ձախ անկիւնում նստած են աղաւոր տեսքով երկու կին, որոնցից երկրորդի զբը-

18. WEITZMANN K., *The Origin of the Threnos...*, p. 483-484, fig. 11.

19. ՅՈՎՍԷՓՈՍ Գ., Հաւուց Թառի Ամեմափրկիչը..., պատկ. 45: DER NERSESSIAN S., *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, Baltimore, 1974, pl. 59, fig. 84.

խաչորը ու դէմքի մի մասը հաղիւ են երեւում միւսի տեսելից : Նրանց վերեւում կիսով չափ նկարուած է վշտակից քրորդ կէնը՝ դգեատով ծածկուած ձեռքը դէմքին հպած : Մանրանկարի ձախ մասում ցոյց է տրուած պերեգմանը՝ կոնաձեւ տանիք ունեցող ուղղանկիւն շէնքի տեսքով : Ս . Տէր-Ներմէսեանի կարծիքով, այս կառոյցի տեղադրու-թեան պատճառով է դէպի աջ շարժուած խաչափայտը :

Սեբաստիայի Ալեետարանի պատկերի նկարագրութիւնից երեւում է, որ նրա յօրինուածքի հիմնական մասը կառուցուած է ի հաշիւ «Պաշից իջեցման» տեսարանի կանոնիկ առանձնաշատկութիւնների : Այդ բաղկացուցիչ մասերի մանրակրկիտ քննութիւնից կարելի է եզրակացնել, որ Ռոսլինը տուեալ դէպքում կողմնորոշուել է դէպի ԺԲ . դարի իջակից՝ Միլեթիկական ծովի ափերին տարածուած դտած պատ-կերագրական տարբերակները : Մարիամի հոգեկան զեղումը ներկա-յացնելու ձեւը մերձեցնում է Ռոսլինի մանրանկարը իտալական, Փրանսական եւ սեբաստիական փեղանկարչութեան ԺԲ-ԺԳ . դդ . նմոշչ-ների մի առանձնաշատուկ ընտանիքի հետ : Այդ յուշարձաններում եւս, ինչպէս հայ ծաղկողի աշխատանքում, կոյսը գտնուում է որդու դիւրավերեւում՝ Յովսէփի կողքին, նրա հետ զոնած ցած ընկնող մար-մինը : Այսպիսի պատկերագրական առանձնաշատկութիւն ունեցող ստեղծագործութիւններից հնազոյնը՝ մօտաւորապէս 1150 թ . ծաղ-կուած իտալական Ալեետարանի (Նոնանթոլա, Աբբայութեան արխիւ) մանրանկարն է²⁰ : Ակնյայտ ընդհանրութեան հետ մէկտեղ, այդ աշ-խատանքի եւ Ռոսլինի երկի միջեւ կան եւ տարբերութիւններ : Առա-ջին օրինակում Մարիամը այտը սեղումում է Քրիստոսի դէմքին, ասես «զգւում նրան իբ շնչով» (Գ . Միլլէ), իսկ երկրորդում, այսինքն կի-րիկեան պատկերի մէջ՝ կոյսը յլուելը հպում է որդու մագերին : Այս կանոնիկ յատկանշով նոյնպէս իտալական մանրանկարը ամենահինն է իրեն աղերսուող ստեղծագործութիւնների լիւթում : Մարիամի դիր-քը եւ գործողութիւնները նման ձեւով ներկայացնող երկերի ուսում-նասիրման ժամանակ Գ . Միլլէին յայտնի չեն եղել 1150 թ . Նոնան-թոլայի ձեռագիրը եւ նոյն ժամանակի նմանաիպ երկերը, ուստի անուանի բիւզանդադէտը այդ պատկերագրական ընտանիքի առաւել վաղ օրինակ վէ համարում Ակիլիեայի (Սեբբիա) ԺԲ . դարի վերջի տաճարի՝ բիւզանդական նշանաւոր կոթողներից մէկի որմնանկա-րը²¹ (որտեղ առկայ է իտալական ձեռագրի ձեւաւորման յօրինուած-քը) : Գ . Միլլէն նաեւ նկատում է, որ նախքան Ակիլիեան, դեռեւս Ներեզիի (Սեբբիա) 1164 թ . որմնանկարում տեսանելի է մայրական սիրոյ զեղումը մարմնաւորելու ոչ նոյն, բայց նման կերպը . Կոյսը

20. BOSKOVITS M. - JASZAI G., Kreuzabnahme, Abb. 5, S. 591, 603-604.

21. MILLET G., Recherches..., fig. 513, p. 479-481.

առանց որդու սըխարվերեն անցնելու՝ մերձենում է նրա ղեմքին, ընթացանքով հպում այտը այտին, ձեռքը դնում ուսին եւ բռնում աջը²² : Տ. Վելմանսին (որին ևս ծանօթ չէ Նոնանթոյայի ձեռագիրը եւ նոյն ժամանակի նման օրինակները) թւում է, թէ Ակվիլեայի որմնակաւորիչը օգտուում է Ներքեղի պատկերից, շեշտելով դրամատիկ արտայայտութիւնը²³ : Իայց, ինչպէս տեսանք, Ակվիլեայի վարպետը իրականում կրկնում է իտալական մատենի մանրանկարը եւ ոչ թէ հիմնում Ներքեղի ձեւաորման վրայ :

Իտալական յուշարձանի կանոնիկ առանձնապատկերներն ունեն նաեւ Ակվիլեայի որմնակարին ժամանակակից կամ մինչեւ այն ստեղծուած Ֆրանսական երկու աշխատանքներ : Ինքերոք թարգմանու 1195 թ. Սաղմոսագրքի (Շանթիյէ, Կոնրէի թանգարան, Ms. 1695) եւ Նանթույի եկեղեցու Ժ. Դ. վերջի արծնապատ մասնատուկի պատկերները²⁴ :

Ակվիլեայի որմնակարները ուսումնասիրող Ռ. Վալլանին ծանօթ չեն իտալական եւ Ֆրանսական յիշեալ դործերը, բայց նրա դիտողութիւնները սերբական «Սաչից իջեցման» վերաբերեալ՝ օգնում են աւելի լաւ հասկնալ, թէ որն է ինդրոյ առարկայ պատկերատիպի մասսայական դառնալու պատճառը : Նա ցոյց է տալիս, որ Ակվիլեայի տարբերակում քացայայտուած է Բրիտտոի ողբերգական զոհաբերութիւնը եւ շեշտուած են նրա մօր տառապանքները, տրանսցենդենտալ միստիկական իմաստով առաջ է մղուած որդակորոյս Մարիամի եւ դաւակի ողբերգական միասնութիւնը²⁵ : Ռ. Վալլանը նկատում է, որ կերպարների տեղադրութիւնը տեսարանին հաղորդում է հոբերանական եւ զգացմունքային ուժեղ լիցք, այստեղ է, որ մահացած Բրիտտոի ուսը վերջին անգամ յեղում է վրան հակուած մօրը²⁶ : Գիտնականի մէջբերուած դիտողութիւնները հաւասարապէս վերաբերում են նոյն պատկերադրական ընտանիքի միւս

22. IDEM, *L'art des Balkans et l'Italie au XIII^e siècle* - Atti del V^o Congresso Internazionale degli Studi Bizantini, Roma 20-26 Settembre 1936, Roma, 1940, vol. 2, p. 276.
23. VELMANS T., *La Peinture Murale...*, p. 107.
24. *S'w The Year 1200, II, A Background Survey*, published in conjunction with the Centennial Exhibition at the Metropolitan Museum of Art, Compiled and edited by F. Deuchler, *The Cloisters Studies in Medieval Art II, The Metropolitan Museum of Art*, 1970, fig. 193; MALE E., *L'Art Religieux du XII^e siècle en France*, Paris, 1924, fig. 110; COOK W. W. S., *The Earliest Painted Panels of Catalonia (V)*. - *The Art Bulletin*, 1927, vol. X, N^o 2, December, p. 203.
25. VALLAND R., *Aquilée et les origines byzantines de la Renaissance*, Paris, 1963, p. 27.
26. Նայմ սեղուս, էջ 28 :

յուշարձաններին եւս եւ օգնում հասկանալ, թէ ինչն է գրաւել թո՛րոս Ռոսլինին եւ այլ վարպետներին կանոնիկ աբբ մտայղացման մէջ :

Ռ. Վալլանը դտնում է, որ Մարիամի դէմքը հպելով Գրիսաոսին, պատկերագրողները իւրայատուկ ողբ են ցուցադրում, օգտագործում զբացմունքային լրացուցիչ այնպիսի մանրամասն, որ դրաւում է նաեւ ուրիշ նկարիչների ուշադրութիւնը: Ակվիլեանյի օրինակով ուսումնասիրողը նշում է, որ այդտեղ միմեանց վրայ աղբւլ են «Սաչից իջեցման» եւ «Ողբի» (Threnos) տեսարանները, որովհետեւ երկուսում էլ Մարիամը նոյն ձևով է հպւում որդուն²⁷ :

Զի կարելի պնդել, որ այս պատկերագրութիւնն ունեցող երկերը բոլորովին այնպստ են մնացել բիւզանդական մանրանկարիչներին: Նիւ Շորբի Փիլիպիոսի Մորգան դրադարանի (1639) ԺԱ. զ. վերջից մինչեւ ԺԲ. զ. առաջին կէսը ընկած ժամանակահատուածում ստեղծուած բիւզանդական ձեռագրում կայ մի պատկեր, որտեղ տեսնում ենք թէ եւ բասական փոփոխուած, բայց նոյն պատկերագրութիւնը²⁸ :

Գեղարուեստական ոճի զգացմունքայնութիւնն աւելացնելու համար, խնդրոյ առարկայ կանոնիկ տարբերակի առանձնապատկութիւններով են առաջնորդւում եւ ԺԳ. դարի Պայետոզեան նկարիչները: Ուսումնասիրողները նշում են, որ յոյերի արտայայտութիւնն այդ շրջանում մէկն է այն հիմնական գործօններից, որոնցով պայմանաւորւում է նոր թեմաների յայտնութիւնը եւ գոյութիւն ունեցող թեմաների զարգացումը:

Դա յատկապէս այնպստ է Մարիամի կերպարը ընդգրկող տեսարաններում²⁹ :

Նոնանթոյայի մատենի մանրանկարում դրսեւորուող նորամուծութիւնը ԺԳ. դարում ամէնից առաջ որդեգրւում է 1234-1236 թթ. ընթացքում կատարուած Միլյոչեոյի (Սերբիա) որմնանկարում³⁰ եւ Ռոսլինի 1262 թ. պատկերում: Գաղափար չուեննալով վերջինիս մասին, Գ. Միլլէն նկատում է մայրական սիրոյ մարմնաւորման նմանօրինակ դէպքերը Դուչենտոյի շրջանի իտալական ստեղծագործութիւններում: Նա գտնում է, որ պատկերագրական այդ առանձնապատկութիւնն ունեցող տարբերակը շատ սիրուած է Իտալիա: Միլյոչեոյի ձեւաւորումից յետոյ նա նշում է այնպիսի յուշարձաններ, ինչպիսիք են Ջետտիլէ Բելլիերի ընդօրինակութեան շնորհիւ յայտնի Վենետիկի Ս. Մարկոսի տաճարի 1275 թ. քիչ առաջ յորինուած խը-

27. Նոյն տեղում, գլ 32:

28. WEITZMANN K., *The Constantinopolitan Lectionary*, Morgan 639, in: *Byzantine Liturgical Psalters and Gospels*, London, 1980, fig. 318, p. 366-367.

29. VELMANS T., *La Peinture Murale...*, p. 110.

30. MILLET G., *L'art des Balkans...*, p. 279-280, tav. LXXXI, LXXXII.

ճանկարը, մօտաւորապէս 1275 թ. ստեղծուած Պիտոյայի տաճարի որմնանկարը, նոյն ժամանակի գործ հանդիսացող ևւ Զուշտա Պի-վանոյին վերադրուող Պերուզայի եռանկարի դրուակը (Պերուզա, Վանուչչի վիանդարան, թիւ 21) ևւ դարավերջի ու ժԳ. հարկաւ-մեակի սկզբի այլ սրկեր³¹ :

Գ. Միլլէն հրատարում է մարդկային վիշտն արտայայտող մո-տիւններն ու տիպերը իտալիոյ վերագրելուց, ևւ հարց է առաջա-դրում, թէ արդեօք բալկանեան արուեստանոցներում չպիտի փըն-տուել նման կարգի երեւոյթներէ ծնունդը կամ վերածուումը, աւելի արտայայտիչ ու շեշտուած կերպով³² :

Ըստ Ներեւոյթին, անուանի գիտնականը կը յայտնէր այս հարցը առաջ բաշել, եթէ նրան ծանօթ լինէին Նոնանթոլայի ձեռագրի պատ-կերը կամ ժԳ. դարի միւս աշխատանքները: Բացառուած է, որ մեզ հետաքրքրող պատկերագրական տարբերակը իտալիայից տարածուէր դէպի Բալկաններ ևւ Կիլիկիա: Ի դէպ այս ենթադրութեան օգտին է խօսում նաև այն՝ որ 1150 թ. մատեանի ձեւաւորումը (Մարիամի որդուան մերձենալու եղանակով) աւելի մօտ է Ռոսիինի մանրանկա-րին, քան սերբական որմնանկարները ևւ հայ ծաղկողի երկերը բազ-մաթիւ ընդհանրութիւններ ունեն իտալական նմոյշներէ հետ:

Սերաստիայի Ասետարանի նկարազարդման մէջ կայ մի առանձ-նայատկութիւն, որ կրկին անգամ կողմնորոշում է մեզ դէպի Գ. Միլլէի թուարկած յուշարձանների խումբը: Սօսքը վերաբերում է Յովսէփի Վիլի շարժմանը ևւ հայկացելին, որոնք ուղղուած են Յով-հաննէսի կողմը:

«Սաչից փշեցման» բազմաթիւ տեսարաններում Յովսէփը նայում է Մարիամին կամ Գրիստոսին, ևւ միայն ժԳ. դարի 30ական թթ. գործ հանդիսացող Պիզայի նկարազարդ խաչելութեան (Պիզա, Քա-ղաքային թանգարան, թիւ 20) դրուագներէց մէկում է գլուխը ուղ-ղում Յովհաննէսի կողմը, իսկ հայկացքը յարում դիտողին³³: Այս հարուստ ևւ արուեստանոցայատկութեան առկայութիւնը Պիզայի պատ-կերում ևւ Ռոսիինի մանրանկարում, կարծես յուշում է իտալական երկերի հետ կիլիկեցի վարպետի ի մօտոյ ծանօթ լինելու մասին: Կարելի է մտածել, թէ անուանի ծաղկողը ո՛չ միայն պարզապէս տե-ղեակ է նշել Բալկաններում ու իտալիայում յարմարի կանոնիկ յօրին-ուածքին, այլև կապեր ունեցել իտալական որոշակի գեղարուես-տական կենտրոնների հետ ևւ այնտեղ ստացել իր գիտելիքները:

31. IDEM, Recherches..., p. 481, fig. 514, L'art des Balkans..., p. 278-280, tav. LXXXVIII-LXXX.

32. IDEM, L'art des Balkans..., p. 275.

33. COOK W. W. S., The Earliest Painted Panels..., fig. 74, p. 203.

Սեբաստիայի Ալեհտարանի մանրանկարի քննութեան առիթով Ս. Տէր-Ներսէսեան նշում է, որ Յովսէփ Արիմատեացու դէպի Յովհաննէս ու Նիկողեմոս նախող հայեացքը եւ գլխի դիրքը կամրջում են այդ երկու աշակերտներին ցուցադրող հատուածը Յովսէփից, Մարիամից ու Քրիստոսից կազմուած խմբի հետ³⁴ :

Բիւզանդական արուեստում Ներեզիի 1164 թ. տրմանկարից սկսած, ասրա մեզ հետաքրքրող յուշարձանախմբում տարածում գըտած կանոնի համաձայն ելարանի վրայ բարձրացած Յովսէփը՝ յենուում է փառափայտին՝ եւ քանում ուսուցչի ընկնող մարմնի վերին մասը: Պատկերապրական այդ օրինաչափութիւնից Ռոսլին այստեղ օգտուել է մասամբ. հաւատարիմ աշակերտը ոչ թէ՛ ելարանի վրայ է ու յենուած փառափայտին, այլ կանգնած է դրանից հետո՝ զետնին:

Անկարեւոր եւ երկրորդական թուացող այս փոքրիկ շեղումները ցոյց են տալիս, թէ ինչպէս (է օգտուում մեծ վարպետը՝ միջնադարեան կանոնների գինանոցից):

Այդ իմաստով որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Նիկողեմոսի կերպարի կատարումը: Յայտնի են նրան պատկերելու երեք տարբեր կանոններ, որոնք բոլորն էլ դիտուում են վերը բերուած յուշարձաններում:

Այս օրինաչափութիւններից մէկը, որը արտացոլուած է Սեբաստիայի Ալեհտարանի ձեւաւորման մէջ՝ ուսուցչի ոտքի բեւեռները հանող աշակերտի կերպարը (երկու եւ ոչ թէ՛ մէկ ձեռքով աքցանը բռնած) կրկին անգամ աղերսում է Ռոսլինի մանրանկարը Ներեզիի որմնանկարի, Վենետիկի Ս. Մարկոսի տաճարի խճանկարի, Պերուզայի եռանկարի գրուածքի եւ այլ երկերի հետ³⁵: Միաժամանակ Նիկողեմոսի կիսաթեքուած եւ ոչ թէ՛ ծնկադիր դիրքը տարբերում է կիլիկեան ստեղծագործութիւնը համեմատուող նմոյշներից եւ յիշեցնում 11րդ դարի հայկական մանրանկարները: Սա այն եղակի ընդհանրութիւններից է, որոնք նշմարելի են Ռոսլինի եւ նախընթաց չրջանի հայ ծաղկողների խնդրոյ առարկայ լծեմայով կատարուած ձեւաւորումների միջեւ: Եթէ՛ Սեբաստիայի Ալեհտարանի նկարազարդման մէջ «Սաչից իջեցման» տեսարանի պատկերադրական աւանդոյթները կողմնորոշում են մեզ փխաւորասէս դէպի նոյն ժամանակի իտալական աշխատանքները, ապա «Թաղման» հատուածի բաղկացուցիչ մասերը՝ յիշեցնում են միայն բիւզանդական գրքարուեստի օրինակների աւանդնայատկութիւնները: Հարկ է նկատել, որ «Թաղման»

34. DER NERSSESIAN S., *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 16.

35. MILLET G., *L'art des Balkans...*, p. 280-281.

դրուագի մանրամասները այստեղ աւելի շատ են, քան Ռոսլինի միւս մանրանկարներում :

Փւղարեղ կանանց առկայութիւնը Սերաստիայի Աւետարանի ձեւաւորման մէջ, թեւում է, թէ թելադրուած է «Գերեզման իջնցնելու» աշխարհի պատկերներով, ինչպիսիք են Աթոս լեռան Պանտոկրատորի (Ամենակարի) վանքի թիւ 61 Սաղմոսադրքի (Թ. դ. վերջ) եւ Լեոնինգրադի Հանրային գրադարանի յունական թիւ 21 Աւետարանի (Ժ. դար) նկարազարդումները³⁶ : Յիշենք նաեւ, որ Լեոնինգրադի մատենանի եւ Փարիզի Աղգային գրադարանի թիւ 115 յունական Աւետարանի (ԺԱ. դ) պատկերները ըստ Գ. Միլլէի, ստեղծուած են նոյն նախօրինակի հիման վրայ³⁷ : Այս փաստը վկայում է բիւզանդական պատկերազուտութեան մէջ մեղ հետաքրքրող առանձնայատկութեան քաւարար չարիով յայտնի լինելու մասին : Ժ. դարի առաջին կէտից սկսած «Թաղման» տեսարաններից անհետանում են նստած Մարիամները կերպարները³⁸ : «Թաղման» ներկայ ողբացող կանայք շարունակուում են կանգնած դիրքով ներկայացուել 1066 թ. բիւզանդական Սաղմոսադրքի (Լոնդոն, Բրիտանական թանգարան, MS. Add. 19352), Փարիզի Աղգային գրադարանի ԺԱ. դ. Աւետարանի (յուն. 74) մանրանկարներում³⁹ : Մերթ կանգնած, մերթ նստած դիրքով նրանք հանդէս են գալիս նաեւ Յլոբրենցիայի Լաուրենցեան գրադարանում պահուող վերը յիշուած ԺԱ. դ. յունական Աւետարանի ձեւաւորումներում, որոնք ունեն Ռոսլինի պատկերից միանգամայն տարբեր յորինուածք⁴⁰ : Այս ձեռագրի էջերին եղած հայերէն մակագրութիւններից պարզուում է, որ այն ժամանակին դառնուել է հայկական միջավայրում⁴¹, իսկ Նշանաւոր ութ նկարիչների Աւետարանի (Մատենադարան, թիւ 7651) նկարազարդումների մի մասի աղբրները այդ մատենանի մանրանկարների հետ, գիտնականներին մտածել են տալիս, որ կիլիկեան վարպետները իրենց ստեղծագործութիւնները համար իբրեւ նախօրինակ օգտագործել են բիւզանդական տուեալ Աւետարանի ձեւաւորումները⁴² : Ութ նկարիչների ձեռագրի ծաղկազարդումը սկսուել է 13րդ դարի 80ական թթ. եւ աւարտուել 1320 թ. անուանի վարպետ Սարգիս Պիծակի կողմից : Կի-

36. IDEM, *Recherches...*, p. 462-463, fig. 483-485.

37. Նոյմ տեղում :

38. Նոյմ տեղում, էջ 463, նկ. 497 :

39. WEITZMANN K., *The Origin of the Threnos...*, p. 481, fig. 6, 7.

40. MILLET G., *Recherches...*, fig. 527-529; VELMANS T., *Le Tétraévangile de la Laurentienne*, Florence, Laur. VI. 23., Paris, 1971, fig. 96-98.

41. DER NERSESSIAN S., *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, Washington, 1963, p. 44.

42. Նոյմ տեղում :

լիկեանն այդ Աւետարանը հայ միջնադարեան դրքարուեստի դլուխ-գործոցներէից ւէ :

Ս. Տէր-Ներսէսեանը դտնում է, որ եթէ Ռոսլինի ժամանակակիցը կամ ժամանակակիցները իրենց տրամադրութեան տակ են ունեցել այժմ Ֆրորենցիայում պահուող մատեանը, ապա մեծ նկարիչը, թերեւս, նոյնպէս կարող էր ծանօթ լինել դրան : Այս ենթադրութեան օգտին են խօսում նաեւ Թորոս Ռոսլինի միս ձեռագրերի ծաղկազարդ էջերը, որոնք նման չլինելով հանդերձ, բաղմիցս յիշեցնում են քիւլանդական խնդրոյ առարկայ Աւետարանի պատկերները⁴³ :

Ծանօթ լինելով միայն Լաուրենցեան դրաղարանի մատեանին, Ռոսլինը առանց կրկնելու վերջինիս մանրանկարները, կարող էր նոյնքան ազատ կերպով իր ստեղծագործութեան մէջ ներմուծել հին գեղանկարչներին նախասիրած մոտիւր :

Յիշարժան է, որ նստած կանանց կերպարները ԺԳ. դարում իրենց երկերի մէջ էին տեղադրում նաեւ որոշ քիւլանդական մանրանկարիչներ, օրինակ Բեռլինի Պետական թանգարանում գտնուող Աւետարանի (յուն. զԱ. 66) նկարադարձողը⁴⁴ : ԺԳ. դարի սկզբի այդ ձեռագրի⁴⁵ պատկերը չի ընդգրկում «Սաչից իջեցման» թեման (վերջինս ներկայացուած է առանձին) և ցուցադրում է միայն Մարիամներին գերեզմանի կողքին :

Հին մոտիւրի վերածնութիւնը Ռոսլինի եւ նրան ժամանակակից յոյն ծաղկողի երկերում, ըստ Էրեստլթին, պատահական չէ : Բացառուած չէ, որ երկու վարպետների ձեռքի տակ յայտնուէին նոյն նախօրինակները : Հետաքրքիր է, որ քիւլանդական մատեանի ձեւաւորումների մերձաւորութիւնը կիլիկեան գեղարուեստական իրականութեան հետ կարելի է հետեւել նաեւ այլ ուղիներով : Մակադրութիւնների համաձայն Բեռլինի ձեռագիրը մինչեւ 1219 թ. պահուել է եգիպտական վանքերից մէկում, ուստի ստեղծուել է այդ թուականից առաջ և այնպիսի մի տարածքում, որ սահմանակից էր կիլիկեան պետութեանը, Հ. Բուխթալ հաւանական է համարում ԺԲ. դ. վերջի կիլիկեան առանձին մատեանների պատկերներից քիւլանդական Աւետարանի խորանների ընդօրինակուած լինելը⁴⁶ :

43. Նոյ՞ տեղում, էջ 44-47 :

44. MILLET G., Recherches..., p. 465, fig. 487.

45. HAMANN-MAC LEAN R., Der Berliner Codex Graecus Quarto 66 und seine nächsten Verwandten als Beispiele des Stilwandels im frühen 13. Jahrhundert. - «Studien zu Buchmalerei und Goldschmiedekunst des Mittelalters. Festschrift K. H. Useners», Marburg und der Lahn, 1967, S. 225-250.

46. BUCHTHAL H., Studies in Byzantine Illumination of the Thirteenth Century. - Jahrbuch der Berliner Museen, Bd. 25, 1983, p. 52, fig. 27-29, 40-41.

Ներկիայի ԺԳ զ․ սկզբի գրքարուեստի օրինակներից Բեռլինի Ա․ Լետարանի Հետ Կապուոզ յունական ձեռագրերի մի ողջ խումբ է նշում գիտնականը, յուշարձաններ, որոնք կրել են ԺԲ․ զ․ կրիկեան մանրանկարչութեան ազդեցութիւնը :

Վերը ասուածից երեւում է, որ Ռոսլինի եւ բիւզանդացի ծաղկողի ձեռագրերի պատկերները Հարազատանում են նաեւ որոշակի աւելուքների նոյնութեամբ, եւ այս իմաստով խնդրոյ առարկայ երկերի ընդհանրութիւնները քննական են ու օրինաչափ: Իր մանրանկարը յօրինելիս Թորոս Ռոսլինը կարող էր աչքի առնել ունենալ նաեւ այդ եւ ուրիշ ձեռագրերի նկարազարդումները: Թէեւ բնաւ պարտադիր չէ, որ նա «Վերլոյշէր» Հին կանոնիկ մանրամասնը նմանօրինակ յուշարձանների օգնութեամբ: Այս վերապահման համար Հիմք են տալիս Ռոսլինի պատկերի եւ համեմատուող նմոյշների մեծ տարբերութիւնները :

Անկարելի չէ, որ Սերաստիայի Ալետարանի «Թաղումը» մանրանկարում Մարիամների կերպարները տեղադրելը նրան «յուշին» բոլորովին այլ ստեղծագործութիւններ, օրինակ, «Ողբի տեսարանները»⁴⁷ :

«Ողբի» բիւզանդական պատկերները սկիզբ են առնում ԺԱ․ դարից եւ ցուցադրում են Գրիատոսի մարմինը կրելու ժամանակ նրա մեքձաւորների կանգ առնելն եւ լացն ու կոծը, աղեկուող սպրումներն եւ հանգուցեային հրատեչտ տալը⁴⁸ : Վաղ բիւզանդական նկարներում «Ողբի» տեսարանները կապուած են մարմինը կրելու դրուանքի հետ⁴⁹ : Այդ իրադարձութիւնները առանձնացնելու պատրաստականութիւնը, ըստ գիտնականների, կարող էր ծագել Արեւելքի եւ Արեւմուտքի թաղման առկորութիւններից, որովհետեւ ալետարանական բնագրում ողբալու պահը չի նշում⁵⁰ : Մասնազէտներին միչտ չէ, որ յաղողում է պարզորոշ կերպով ցուցադրել «Թաղման» եւ «Ողբի» տեսարանների տարբերութիւնը⁵¹ :

Սերաստիայի Ալետարանի մանրանկարում Ռոսլինի ճաշակն ու մտայղացումը արձագանգում են ԺԳ․ դարի իտալական արուեստում ընդհանրացած աւանդութիւն, որի համաձայն «Թաղումը» խառնում էին «Ողբի» Հետ⁵² :

47. LUCCHESI PALLI E., HOFFSCHOLTE L., *Beweinung Christi*, im: *Lexikon der christlichen Ikonographie*, Rom, Freiburg, Basel, Wien, Bd. 1, 1968, S. 278-282; WEITZMANN K., *The Origin of the Threnos*, p. 488.

48. SCHILLER G., *Christian Iconography*, p. 174.

49. Նոյն տեղում, MILLET G., *Recherches...*, p. 496.

50. SCHILLER G., *Christian Iconography*, p. 174.

51. Նոյն տեղում:

52. Նոյն տեղում:

ԺԱ. դարի բիւզանդական փոլոսկերի խմբերից մէկի քանդակներում «Ողբը» գետեղուած է «Սաչից իջեցման»⁵³ տակ: Եթէ մեծ կիրիկեցուն յայտնի է սեղել այդ յուշարձանների շարքը, ապա դրանցում արձանագրուած կանոններից եւ մանրամասներից նրա ստեղծագործութեան մէջ տեղ են գտել միայն սզացող կանայք, այն էլ ոչ նոյնութեամբ: «Ողբի» տեսարաններից են այստեղ թափանցել մեղհետաքրքրող կերպարները, թէ «Թաղման» պատկերներից:

Այդ հարցին այժմ հնարաւոր է պատասխանել, որովհետեւ որքան որ հաւանական է մի ուղին, նոյնքան հնարաւոր է նաեւ միւսը: Անկախ նրանից, թէ սզացող Մարիամները Ռոսլինի պատկերում ինչ նկարների թելադրանքով են յայտնուել, մի քան պարզ է, որ կիրիկեցի ծաղիկող մէկից աւելի հնարաւորութիւններ ունէր այդ կերպարների հետ առնչուող կանոնները ուսումնասիրելու համար:

Ռոսլինի մանրանկարը ցուցադրում է վերջիններիս ոչ սովորական դիրքերով եւ տեղադրութեամբ, ուստի հարց է առաջանում՝ ո՞ր տեղից է վարիս եւ փնջո՞վ է պայմանաւորուած Մարիամների այգօրինակ փատարումը:

Բիւզանդացի մանրանկարչները «Ողբի» տեսարաններում նրանց ցուցադրում են գերեզմանի կամ ժայռերի ետեւից եւ ոչ թէ գլխահակ, այլ կողքի վրայ նստած, վշտահար, թեւաթափ տեսքով, որոշ դէպքերում ձեռքերը ւերկինք տարդած, ւերբմն կանգնած⁵⁴: Ռոսլինի մանրանկարում սզաւոր Մարիամների կերպարների կենսական ճշմարտացիութիւնը կարող էր ի յայտ գալ ո՛չ միայն հինաւուրց պատկերները ընդօրինակելու միջոցով, այլեւ թաղման հայկական սովորութիւնների թելադրանքով:

Անգամ այսօր Հայաստանում յաճախ ննջեցեալի հարազատ կանայք, նախքան նրան գերեզման իջեցնելը, աղեկատու ճիչերով շարունակում են ողբով մերձաւորի անշունչ մարմնի վրայ: Այս սովորութեան մէջ հեթանոսական ժամանակների ձայնարկու կանանց, եղբւրամայրերի յուշն է պահպանուել:

Միջնադարեան Հայաստանում յատուկ լալկան կանանց գոյութեան մասին փաստեր կան հայ հին պարկանութեան ւերկերում⁵⁵:

Աղաւականների, մտերիմների կորստեան ցաւը ճաշակած վրաքանչիւր մարդու նման՝ Ռոսլինը սեւ պէտք է բազմիցս ակնատես եղած լիներ նրանց վերջին հրաժեշտը տալու արարողութեանը: Սեբաստիայի Աեռտարանի մանրանկարում ողբացող կանանց կատար-

53. Նոյն տեղում:

54. MILLET G., *Recherches...*, fig. 528, 529, 533, 535; WEITZMANN K., *The Origin of the Threnos*, fig. 10, 12-14, 16.

55. ԽԱՉԱՍՏՐԵԱՆ Գ. Մ., Հայ միջնադարեան պատմական ողբեր (ԺԳ-ԺԵ դդ.), Ե., 1969, էջ 6, 7:

ման ձեւը թոյլ է տալիս մտածել, որ սա այն դէպքերից մէկն է, երբ տաղանդաշատ վարպետի արուեստի մէջ կանոնիկ կերպարները զառնում են իրական կեանքից ստացած տպաւորութիւնների կրողները: Այստեղ Մարիամների զէրքը եւ տեղը կարծես զանուած է մաթեմատիկական ճշգրտութեամբ: Ողջ պատկերի, գեղարուեստական իմաստով, ամենայնպէս կտորն է դա: Թոււմ է, թէ հեղինակը այդ կերպարներին յատուկ ուշադրութիւն է դարձրել, նրանց մէջ առանձին իմաստ գրել: Վշտից մի լուռ զարձած, զլիսահակ այդ կանանցից առաջինը կարծես մահուան անձնաւորումը լինի: Նրա կերպարը ասես նախապատրաստում է զիտողին եւ որոշակիօրէն տրամադրում ընկալելու պէրը ծաւալուող սերօժողութիւնները եւ ներկայացուող անձանց:

Ողբի տեսարանի զգացմունքային լիցքը մի մարդու մէջ վատարցւնելով, ողբերգութեան մարմնաւորումը ստեղծելու հնարանքով եւ անգամ այդ կերպար-խորհրդանշանի տեղադրութեամբ եւ կատարման մանրամասներով Ռոսլինի մանրանկարը կառնայից յիշեցնում է մ.թ.ա. Դ. դարի առաջին կէտին ապրած յոյն նշանաւոր արձանագործ Սկոպասի «Պատանու դամբանաքարը», որ գտնուել է Իլիսս գետից⁵⁶: Կեանքից հեռացած պատանու եւ նրան հրածեշտ սուող վշտահար ծերունի հօր հետ մէկտեղ քանդակի մէջ երեւան է գալիս մահը խորհրդանշող, զլիսահակ նստած, ջուռ մտած փոքր տղայի կերպարանքը: Վերջինս տեղադրուած է դամբանաքարի ձախ անկիւնում, հանդուցեալ պատանու ոտքերի մօտ: Ռոսլինի եւ Սկոպասի երկերի նմանութիւնը կարող է պատահական լինել, բայց բացառուած չէ, որ կլիկիկցի ծաղկողը նաեւ ծանօթ լինէր յոյն նշանաւոր վարպետի ստեղծագործութիւններին կամ զբանց հետ առնչուող օրինակներին: Նոյնիսկ, եթէ այս նմանութիւնը պատահական է, անգամ այդ դէպքում համեմատուող յուշարձանների մերձաւորութիւնը վկայում է Ռոսլինի մանրանկարում դասական արուեստի օրինաչափութիւններին համաօր կանոնների առկայութեան մասին:

Եթէ Սկոպասի երկը ծանօթ է եղել Թորոս Ռոսլինին, ապա այն վերջինիս կարող էր զբաւել տառապանքի մտափնտրում, մարդկային կերպարի ներքին ողբերգական քնկումի վերարտադրութեամբ, ըզկեցմունքների ուժով եւ կենսական վտրուլթեամբ⁵⁷: Ինչպէս կլիկիկցի վարպետի, այնպէս էլ յոյն քանդակագործի մօտ կան նաեւ այլ նմանութիւններ՝ օրինակ ծերունի հօր ձեռքի շարժումը, որ յիշեցնում է հայկական մանրանկարում Յովհաննէսի ողբալու եղանակը:

56. Արուեստի համընդհանուր պատմութիւն, Հատ. 1, Հիմ աշխարհի արուեստը, ընդհ. խմբագիր Ա. Դ. Չեքոպան, Մոսկուա, 1956, (ուսեթբն) նկ. 201:

57. Նոյն տեղում, էջ 236-237:

Արուեստաբանները նկատել են, որ անտիկ գեորեզմանային արուեստի յուշարձաններին բնորոշ ողբեր արտաբայտչամիջոցները, ժեստերը կրկնում են «Ողբի» բիբլիոկալան փրկերում⁵⁸: Բիբլիոկալան հեղինակները, օրինակ դասական նախօրինակները ընտրում էին ոչ միայն քաղաքապետի ձևաձևերն յատկանիշները համար, այլև նման իմաստ հաղորդելու պատճառով⁵⁹:

Իրական մարդկանց ուսումնասիրելուն զուգընթաց Ռոսլինը պէտք է, որ իւրաքրած ընկեր նաեւ անտիկ շրջանի տաղանդաշատ վարպետները փորձը: Այս հարցում նրան կարող էին ուղեները լինել՝ ոչ միայն բիբլիոկալանի իր ժամանակակիցների և նախորդների հրատարակչական թիվը անտիկ արձանագործութեամբ եւ արուեստով, այլև հայ մշակութի, մասնաւորապէս կիլիկեան գործիչները վերաբերմունքը հեթանոսական հնամենի կոթողների հանդէպ: Վերջիններիս կողմնորոշումների մասին է պիտի կարծու Ներսէս Ծնորհալու այն կարծիքը, որ հեթանոսական քանաստեղծական արուեստի արտաբայտչամիջոցները կարող էին կիրառուել նաեւ հոգեւոր թեմայով դրական ստեղծագործութիւնների յօրինման համար⁶⁰:

Ռոսլինեան երկը մեզ ասեա համոզում է, որ գեղարդիտական նոյն դաւանանքը կարող էր ունենալ եւ կիլիկեցի ծաղիկողը հին կերպարուեստի արտաբայտչամիջոցները կիրառելու հարցում: Անկասկած, թորոս Ռոսլինի նման կարգացած հեղինակին պիտի յայտնի լինէր Ներսէս Ծնորհալու դրական ժառանգութիւնը: Այս երկու արուեստագէտներին մերձեցնում է ոչ միայն գեղարդիտական հայեացքների հարադատութիւնը, այլև, ընդհանրապէս, յոյն մշակութի իմացութիւնը: Կիլիկեան պետական գործիչը, քանաստեղծը եւ անուանի մանրանկարիչը մեր մշակութի միւս մեծերի նման տիրապետում էին յունարէնին եւ քացի այդ նրանցից առաջինը խոր գիտակ էր յոյն քանաստեղծական ժառանգութեանը, իսկ երկրորդը՝ գեղարուեստի պատմութեանը:

Ծնորհալու և Ռոսլինի գեղարդիտական հայեացքների մերձաւորութիւնը ուշադրաւ է կիլիկեան դրականութեան եւ մանրանկարչութեան կապերը ուսումնասիրելու տեսակէտից, քայքայ ո՛չ պակաս հետաքրքիր է աւանդութիւնների ժառանգման և զարգացման առումով, եւ ի վերջոյ ԺԳ. զարի կիլիկեան գեղարուեստական իրականութեան բարձր գարգացումը բնորոշելու համար:

Անտիկ քաղաքակրթութեան նկատմամբ մեծ հետաքրքրութիւնը յատկանշական էր Միջերկրականի ափերին հաստատուած հայկական թագաւորութեան մշակութային կեանքի համար եւ Ծնորհալու ժա-

58. WEITZMANN K., *The Origin of the Threnos*, p. 488, fig. 17.

59. Նոյմ տեղում:

60. ՄԱԴՈՒՆ Ա., Միջագարեան հայկական պոէմը, Երևան, 1985, էջ 43:

մանակ է՛ւ Ռոսլինի օրով: Այդ շրջանի գրական գործիչներից եւ մեծ ծաղկողի ժամանակակիցներից Վահրամ Բարսեւու (որը նոյնպէս կապուած էր կիլիկեան արքունիքի հետ) յոյն փիլիսոփաների երկերի մեկնութիւնները⁶¹ մատնանշում են՝ նախ հայ իմաստասիրական դիտումների գարաւոր արանդոյթների նկատմամբ հաւատարմութիւնը, եւ ապա, քննորոշում կիլիկեան իրականութեան մէջ իշխող կողմնորոշումները: Վերը ասուածից երեւում է, որ անտիկ արուեստի կանոնների իմացութիւնը Ռոսլինի կողմից միանգամայն օրինաչափ երեւոյթ է: Նրա մանրանկարի դասական մակարդակ ունեցող առանձնայատկութիւնները իրենցով նշանաւորում են հայ ծաղկողների գեղարուեստական մեծ նուաճումների աստիճանը ԺԳ. դարի կէսին:

Այդ կարգի արանդոյթների զարգացման յաջորդ փուլը տեսանելի է Ռոսլինի հետեւորդների՝ 70-80ական թուականները կիլիկեան մանրանկարիչների ստեղծարդործութիւններում:

Առաջին հասցեագրից տարօրինակ է լիւում, որ պատկերազարկան իմաստով՝ ոչ մի նոր բան չի տալիս «Սաչից իջեցման» թեմայով կատարուած մանրանկարը, Թորոս Ռոսլինի ստորագրութիւնը կրող 1265 թ. Աւետարանում (Երուսաղէմ, Սբ. Յակոբեանց վանքի հաւաքածոյ, թ. 1956): Սեբաստիայի Աւետարանի պատկերի համեմատ՝ այն ստեղծուած է աւելի համառօտ նախօրինակի հիման վրայ: 1265 թ. ձեռագրում խնդրոյ առարկայ ձեւաւորումը (նկ. 2) շանդէս է գալիս Մարկոսի բնագրում (էջ 171ա)⁶²: Մատենի յիշատակարաններից յայտնի է, որ այն ծաղկուել է Կոստանդին Լամբրոնացու ղըստեր՝ Կեռան տիկնոջ համար: Ի տարբերութիւն կիլիկեցի վարպետի նախորդ աշխատանքի, այս նկարազարգման յօրինուածքը այնքան պարզ է, որ եթէ մեզ յայտնի չլինէր ռոսլինեան Կերկու մատենների ծաղկման ժամանակը, ապա կարելի էր մտածել, թէ՛ առաջին ձեռագրի պատկերը ստեղծուած է Կերկրողի ձեւաւորման հիման վրայ: Կեռան տիկնոջ Աւետարանի մանրանկարը, կարծես, Ռոսլինի առաջին «Սաչից իջեցման» տեսարանի մասն է կազմում: Վրձնի մեծ վարպետի գեղարուեստական կեանքում պատկերազարկան տեսանկիւնից այն անցած մի փուլ է նշանաւորում:

61. ԳՐԻԳՈՐԵԱՆ Գ. Հ., Վախրամ Բարսեւու փիլիսոփայութիւնը, Երեւան, 1969: Նոյնի, Վախրամ Բարսեւու, Արիստոտելի «Կառեգորիաների» վերլուծութիւնը, Երեւան, 1987 (տուներէն):
 62. ՅՈՎՍԵՓԵԱՆ Գ., Հաւուց Թառի Ամեմափրկիչը..., պատկ. 45, էջ 82: **Armenian Art Treasures of Jerusalem**, Ed. by B. Narkiss, In collaboration with M. E. Stone, Historical survey by A. K. Sanjian, New Rochelle, 1979, fig. 70, p. 53, 149.

Ս. Տէր-Ներսէսեանի կարծիքով՝ այս ստեղծագործութեան հեղինակը ոչ թէ Ռոսլինն է, այլ նրա աշակերտներից մէկը:


1265 թ. ձեռագրի պատկերը նոյնպէս վերնադրուած է «Թաղումն Տեառն», սակայն, այսուհանդերձ, տեսարանի հիմնական բովանդակութիւնը «Սաշից իջեցումն» է: Այդ մասին է վկայում Մարիամների բացակայութիւնը: «Թաղման» թեմայի կանոնիկ առանձնայատկութիւններից պահպանուած է միայն ուղղանկիւն շէնքի տեսք ունեցող դերերմանի պատկերը:

Ռոսլինի առջին մանրանկարից նն կարծես այստեղ տեղափոխուած եւ նոյն ձեւով են ներկայացուած՝ Յովսէփը, Նիկողոսմոսը, Յովհաննէսը, նաեւ Քրիստոսի մարմնի դիրքը: Կեանս տիկնոջ Աւետարանի պատկերում նաև Յովսէփը նայում է Նիկողոսմոսի եւ Յովհաննէսի կողմը: Կիրիկեցի ծաղկողի նախորդ աշխատանքից այս մանրանկարը տարբերում է խաչափայտի կենտրոնական տեղադրութեամբ նաև կոյտի դիրքի ներկայացման նոր սեղանակով: Մարիամը ցուցադրուած է որդու կռնակից եւ ոչ լրիւ: Քրիստոսի լուսապսակի ետեւից երեւում է մօր փէմքի միայն մի մասը: Առաջին անգամ Նոնանթոյայի ձեռագրի վերը նշուած մանրանկարում յայտնուող պատկերադրական յատկանիշը այստեղ բացայայտուած է՝ ոչ լրիւ: Իտալական ձեւաւորման մէջ արձանադրուած է կիրիկեան ստեղծագործութեան վարդաքանդակային սուտիճանը, այսինքն Մարիամի դէմքը լրիւ է նկարուած նաև նա համարուում է որդուն: Եթէ Ռոսլինը կամ նրա աշակերտը այստեղ յայտնի կանոնի մէջ անձնական փոփոխութիւն չի մտցրել, ապա կարելի է մտածել, թէ նա օտուուել է մեզ չհասած այնպիսի մի նախօրինակից, որն աւելի հին է քան 1150 թ. խաչակրան մանրանկարը:


Կիրիկեցի նկարչի նախորդ պատկերի միայն սեւ ու սպիտակ հրատարակուած լինելը՝ մեզ հնարաւորութիւն չի տալիս յուշարձանի գունային առանձնայատկութիւնների մասին դատողութիւն անել, մինչդեռ Կեանս տիկնոջ Աւետարանի մանրանկարի ո՛չ այնքան յաջող գեղանկար վերատպութիւնը կարելի է դարձնում գոնէ մօտաւոր գաղափար կազմել ստեղծագործութեան ընդհանուր գունային նկարագրի մասին: Ըստ երևութիւն պատկերադրական կանոնի պահանջներով է թելադրուած պարծառ գոյնների քաջակայութիւնը 1265 թ. ձեւաւորման մէջ: Ամենայն հաւանականութեամբ արդպիսի կատարումը համապատասխանում էր ողբերգական իրադարձութեան նկարադրմանը:

Միջնադարեան պատկերադրութեան տեսանկիւնից նոր երևոյթներ ենք տեսնում «Սաշից իջեցման» թեմայով Թորոս Ռոսլինի վերընշած երրորդ աշխատանքում: Այն գարդարում է 1268 թ. Մալաթիոյ

դիմաց, գլխահակ, ամբողջովին ճնշուած կորստի ցաւով: Յովհաննէս սրբում է արտասուելը, իսկ Մարիամ ողբում, ձեռքը գլխին տալով: Այդ կերպարները, ասեա, նախապատրաստում են դիտողին պատկերի վերելի մասում ծաւալուող զրամատիկ իրադարձութիւնը ընկալելու համար: Նրանք կարծես անմիջականօրէն մանրանկարի մէջ են փոխադրուած կեանքից: Արտասուելը սրբող Յովհաննէսը իր տրամադրութիւնը գլխի շարժման հետ միասին՝ փոխանցում է Նիկողեմ մօսին եւ բեւեռները հանողին: Այս երեքը մարմնի գիրքերը կրկնում են միմեանց եւ ունեն նոյն ուղղութեամբութիւնը: Փոխադարձ կապ կայ նաեւ մանրանկարի միւս մասերի միջեւ: Պատկերը հիմնականում կառուցուած է ուղղահայեաց եւ հորիզոնական առանցքների հակադրութեան հիման վրայ: Սաչափայտի հորիզոնական հիծանը զուգահեռ է Քրիստոսի մարմնին, իսկ ուղղահայեաց բունը՝ Նիկողեմօսի, Յովսէփի կեցուածքներին եւ դերեզմանին: Անկիւնում նստած Մարիամի եզրանկարը՝ կրկնուած է վարդապետի քարի եւ անելի վերելում պատկերուած քերզմանի ձեւերով: Մանրանկարի ներքին կոնֆլիկտային ուրիշ ուժեղանում է նաեւ ի հաչիւ կոր եւ ուղիղ դժերի հակադրութեան: Կորերը հանդէս են դալիս ներքեւի կերպարների, գլուխների, ուսերի, մէջքի զծապրութեան մէջ, հողաթմբերի, դերեզմանի ձեւերում, Նիկողեմօսի, Յովսէփի, բեւեռները հանող ծառայի գլուխներին, ուսերի ուրուարձերում: Նոյն կերպարների եւ առարկաների տարբեր մասերում հանդէս են գալիս եւ ուղիղ դժերը, որոնք իւրատեսակ «բախման» մէջ են մտնում կորերի հետ, հակադրում նրանց: Պատկերի ուրիշակ յօրինուածքը վերլուծելիս անհրաժեշտ է նկատի առնել անկիւնադձերի եւ միւս թեք դժերի փոխակապակցութեանն ու «հակառակութիւնը»: Նոյն անկիւնադձի վերայ են Նիկողեմօսի ուսերի եւ գլխի հատուածը, նարնջադոյն թըւացող հողաշերտի եզրանկարը: Դրանց զուգահեռ, առանձին առանցքների վրայ են գտնուում բեւեռները քաշող ծառան, եւ նրա ետեւից երեւցող ելարանի յենարան փայտը, Քրիստոսի, Յովսէփի, Նիկողեմօսի ոտքերը, դերեզմանի բացուածքը փակող, դետնին ընկած բաց կապտաուուն պատանքը, արտասուելը սրբող Յովհաննէսը: Մրանց ուղղութեանը հակառակ են նկարուած անկիւնում ողբացող Մարիամը, ելարանը, Քրիստոսի, Նիկողեմօսի, Յովսէփի ձեւերի շարժումները: Մալաթիոյ Աւետարանի մանրանկարի թաքուն երկրաչափականութիւնը ցոյց է տալիս՝ ստեղծագործութեան յօրինուածքի խիստ մտածութեամբութիւնը եւ Ռոսյինի գեղարուեստական մտածողութեան մաթեմատիկական բնոյթը: Պատկերի ներքին ուրիշ մի լարուածութիւնը ուժեղացուած է կերպարների հայեացքների եւ տրամադրութիւնների գրացմունքային աստիճաններով:



Նկ. 3.- «Խաչից իջեցում» 1268 թ. Մալաթիայի Առետարանի (Երեսն Մատենադարան, Ձեռ. 10675) Մանրանկար, էջ 98ա, նկարիչ Թորոս Ռուսին:



ՄԿԶ
ԻՍԻԿՄԻՄՈՍ ԳԱ

Նկ. 4.- «Խաչից իջեցում» Վասակ Իշխանի Աւետարանի (Վաշինկտոն Ֆրիք Պատկերասրահ, Ջեո. 32-18)
Մանրանկար, էջ 323ա, նկարիչ Թորոս Ռոսլին:

Ռոսլինի «Սաչից իջեցման» միւս ձեւաւորումների համեմատ, այստեղ նոր երեւոյթ է Բրիտտոսի գլխի դիրքը. այն ետ է ընկած որպէս ակնարկ խաչուածի կրած տառապանքների մասին: Այդ մանրամասնով Մայաթիոյ Աւետարանի մանրանկարը մերձենում է վերը նշուած Միբոչեւոյի որմաննկարին, Պերուզայի եռանկարի դրուագին, եւ ամէնից աւելի՝ Պիզայի քաղաքային թանգարանի թիւ 20 խաչելութեան քաղաքընչ պատկերին⁶⁵: Ինչպէս տեսանք այս յուշարձանախմբի հետ աղերսներ ունէին նաեւ Ռոսլինի միւս նոյնանուն աշխատանքները, բայց դրանց մէջ խնդրոյ առարկայ կանոնիկ առանձնաշատութիւնը չկար: Նախորդ տարիների տեղոյնաւորութիւնների պէս, 1268 թ. նկարադարձման մէջ եւս կիլիկիցի ծաղկող ուղղում է Յովսէփի դէմքը դէպի բեւեռները հանողը: Բայց ռոսլինեան առաջին եւ երկրորդ երկերի հակառակ՝ Արիմարթեցու հայեացքը այստեղ սեւեռուած է զիտողին:

Վերը արդէն նշեցինք, որ պատկերագրական այդ հարուստ մանրամասնը՝ առկայ է միայն Պիզայի թանգարանի խաչելութեան դրուագում:

Զի կարելի անտեսել այն փաստը, որ բաղմաթիւ տարբերութիւններով հանդերձ, Ռոսլինի երեք մանրանկարներն աղերսում են Պիզայի վերոյիշեալ «Սաչից իջեցման» հետ այնպիսի եղակի յատկանիշներով, որոնք յայտնի չեն այլ յուշարձանները:

Մեծ նկարչի հետեւողական «վերադարձը» դէպի փտալական վարպետի ձեռքի տակ եղած նախօրինակը, հաստատում է մեր որոնումների ճշտութիւնը, հայ ծաղկողի հաւատարմութիւնը իր նախասիրած պատկերագրական աւանդութիւնների հանդէպ, եւ մի նոր էջ է բացում իտալական արուեստի երկերի հետ՝ Թորոս Ռոսլինի յարաբերութիւնների պատմութեան մէջ:

Մեզ յայտնի միայն մէկ յուշարձանում՝ Գրիգոր Նաղիանդացու ճառերի 867-886 թթ. ժողովածուի (Փարիզ, Ազգային գրադարան, յուն. 510) խաչից իջեցումն ու թաղումը ցուցադրող մանրանկարում, կարելի է տեսնել զիտողին ուղղուած Յովսէփի հայեացքը⁶⁶: Այս եւ նոյն ժամանակի ուրիշ բիւզանդական նմուշները՝ պէտք է որ ծանօթ լինէին Ռոսլինին:

Ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, եւ յիշեալ ձեռագրի եւ Մայաթիոյ Աւետարանի ձեւաւորումներում՝ կան գեղարուեստական նմանատիպ երեւոյթներ:

Նոյն ժամանակի նշանաւոր բիւզանդական ձեռագրերի, օրինակ արդէն յիշատակուած Պանտկրատորի վանքի թիւ 61 Սաղմոսագրքի

65. MILLET G., *L'art des Balkans...*, Tav. LXXIX, LXXXI, LXXXII, fig. 1.
 66. WEITZMANN K., *The Origin of the Threnos...*, p. 481, fig. 4.

նկարազարման աւանդոյթներէր, իմացութեամբ պիտի բացատրել Մալաթիոյ Անետարանի պատկերում Նիկողեմոսի ներկայութիւնը Կոյսին վերապահուող տեղում: Համեմատուող մատաններէր մանրանկարներում, թաղման դրուագում, Քրիստոսի մարմինը սկզբից բռնել է Նիկողեմոսը, եւ ապա Յովսէփ Արիմաթեցին⁶⁷: Բիւզանդական ծաղկողները շարունակում են ընդօրինակել այդ յօրինուածքով ստեղծագործութիւնները եւ յետագայ դարերում, օրինակ ՉԱ. Հարաժմեակում⁶⁸:

Միանգամայն օրինաչափ է, որ թորոս Ռոսսինի նման զարդացած վարպետը ծանօթ լինէր այս կարգի յուշարձաններին:

Հին բիւզանդական մանրանկարչութիւնից յայտնի կանոններով է թելադրուած նաեւ Մալաթիոյ Անետարանի պատկերում Մարիամի եւ Յովհաննէսի ողբալու ձեւը: Այդ շրջանի աշխատանքներում, սըւզացող կանանց խոր յուզմունքը արտայայտելու համար՝ նրանց ցուցադրում էին Հագուտի տակից ջերեւացող կամ քաց ձեռքերով դէմքը ծածկելիս⁶⁹:

Բիւզանդական ՉԱ. դարի պատկերադրութեան ձեւական յատկանիշներէր Հետ է կապուած նաեւ գերեզմանի հաղորդման կերպը 1268 թ. ռոսսինեան մանրանկարում: Տաղանդաշատ վարպետի նախորդ ստեղծագործութիւններում, փնչպէս առիթ ունեցանք համոզուելու, այն ներկայացուած էր շէնքի ձեւով, որ ստվորաբար խորհրդանշում է սուրբ գերեզմանի տաճարը Երուսաղէմում⁷⁰, մինչդեռ այստեղ արուեստագէտը նախընտրում է տալ գերեզմանի աստուածաշնչական ըմբռնումը, ժառափորը, անձաւի տեսքով: Յիշարժան է, որ մեզ հետաքրքրող կանոնիկ առանձնաշատկութիւնը նոյն տիպի է նաեւ վերը նշուած Լաուրենցեան դրաղարանի ձեռագրի նկարազարդումներում⁷¹:

Ատաղին հայեացքից անկարելոր թուացող այս մանրամասները, ոչ թէ պարզապէս մատնանշում են, թէ ո՛ր ժամանակի եւ ո՛ր երկրի պատկերադրական կանոններով է առաջնորդուել կիլիկիցի ծաղկողը իր մանրանկարը ստեղծելիս, այլեւ լոյս են տրուում նրա աշխատանքանակի վրայ, օգնում հասկանալ, թէ ի՞նչ օրինաչափութիւններով են կազմակերպուում, ուղղութիւն ստանում նրա գեղանկարչական մտայնացումները, որտեղ է վերջանում աւանդոյթը եւ սկիզբ առնում նորարարութիւնը:

67. Նոյն տեղում, էջ 478, նկ. 1:

68. Նոյն տեղում, էջ 479, նկ. 3:

69. Նոյն տեղում, էջ 481, նկ. 6, 7:

70. Նոյն տեղում, էջ 482, նկ. 9:

71. VELMANS T., Le Tétravangile de la Laurentienne..., fig. 96-98.

Այսպէս օրինակ՝ Թորոս Ռոսլին աննշան Թուացող մի փոփոխութիւն է մտցնում միջնադարեան կանոնի մէջ, երբ Մալաթիոյ Աւետարանի մանրանկարում Յովնէփի մի ոտքն է զետեղում ելարանի վրայ, իսկ միւսը ցուցադրում զետեղին յենուած: Դարերով սրբազործուած աւանդույթը, որ զարլիս է ժԱ. հարիւրամեակից, ելարանի վրայ⁷² է ներկայացնում վերջինիս: Նման փոքրիկ շեղումներով կիլիկեցի վարպետը, ասես, հետեւում է որոշակի անկախ գծի, միաժամանակ մնալով միջնադարեան արուեստում ընդունուած թեմաների և դրանց պատկերման օրինաչափութիւնների սահմաններում: Թւում է նոյն դեղարոսեստական անկախութեան ձգտելու հետեւանքով է նա պատկերում Յովհաննէսին, ոչ թէ իր սովորական տեղում՝ աջից կանգնած այլ զետեղում պատկերի առջեւի մասում, այն էլ նստած ողբալիս:

Ռոսլինեան վիտելիւնների աշխարհը, նրա մտածողութեան ծալքերը հետախուզելիս թերեւս արժէ ուշադրութիւն տարձնել նրա 1268 թ. մանրանկարի նսեւ ուրիշ առանձնաշատկութիւնների վրայ: Ոսքը վերաբերում է ելարանի և խաչի ներկայացնելու եղանակին: Դրանք երկուսն էլ դուրս են գալիս պատկերի շրջանակից: Այս երեւոյթի շրջանում ստեղծագործութիւնը կարծես տառապան է հարթային լինելուց և՛ ձեռք բերում ծաւալայնութիւն: Ուշափայտն ու երկարնը ասես կտրւում են մանրանկարի մակերեսից և՛ վեր քարճարնում: Հետաքրքիր է, որ Ռոսլինի միւս թեմաներով կատարուած աշխատանքներում եւս, կարելի է տեսնել այսպիսի փաստեր, երբ պատկերի մէջ որեւէ կերպար, առարկայ կամ մանրամասն՝ դուրս է գալիս նկարի շրջանակից: Նման երեւոյթները, հաւանօրէն, զարլիս են միջնադարեան նկարիչների ոչ միայն գեղարուեստական ըմբռնումներից, այլև աշխարհընկալումներից: Դա է պատճառը, որ նոյն առանձնաշատկութիւնները երեւան են զարլիս ամենատարբեր ազգերի երփնազրոյնների մօտ արուեստարանական թեմաներով յօրինուած ստեղծագործութիւններում⁷³:

Ռոսլինի մանրանկարում շրջանակից խաչի դուրս գալը ահամայնից յիշեցնում է վերը նշուած Գրիգոր Ազգլանազացու ճառերի ժողովածուի համանուն պատկերը. յունարան այդ պատկերի շրջանակից, վերելից ներս է խուժում կից նկարուած «Ուշելութեան» տեսարանը: Վերջինիս ներս մտնող մասը խաչափայտի հիմքն է, Գողգոթա լեռան հատուածի հետ: Յունական ստեղծագործութիւնը ընդնող գիտնականներից Կ. Վէյցմանը գտնում է, որ այս հնարանքով

72. SCHILLER G., *Christian Iconography*, p. 166.

73. RATKOWSKA P., *The Iconography of the Deposition without St. John*. Journal of the Warburg and Courtauld Institutes, vol. XXVII (1964), fig. 37d.

մանրանկարիչը ուղեցել է հասկացնել, թե ինչպես պետք է նշանակվել և նորից ամբողջութեան մասը⁷⁴։ Ճիշտ նման մի փրկարիչ է նկատելի նաև Մալաթիոյ Աւետարանի ձեւաւորումներում. «Քրիստոսի յայտնութիւնը աւրբ կանանց» պատկերի մէջ ներքեւից վեր է խոյանում «Հրեշտակի յայտնութիւնը իւղաբերներին» տեսարանը իր գերեզմանի հատուածով։ Դրանով հայ հեղինակը, ըստ երեւոյթին, ակնարկում է, որ փրկու գերուսգները մաս են կազմում «Յարութեան» նկարաչարի։ Թորոս Ռոպինի գեղարուեստական մտածողութեան իւրատեսակ քանակի դերտելով յիշեալ օրինակը, պէտք է մտածել, որ նոյն ձեւաւորում «Սաչից իջեցման» մանրանկարում ելարանի եւ խաչափայտի դուրս գալը շրջանակից՝ ոչ թէ նկարչի քանակաւոր վարպետը միջնադարի ուրիշ ծաղկողներին նման այգալիսով, արտայայտում է աւետարանական պատմութեան փերայատուկ ըմբռնումը։ Նրա պատկերում ներկայացուած խնդրոյ առարկայ մանրամասները՝ միաժամանակ եւ նկարի մէջ եւ նրա սահմաններից դուրս, այսինքն իրական կեանքի մէջ։ Այս փրկարիչը միանգամայն բնական է, որովհետեւ միջնադարեան մարդու մտածողութեան համաձայն աւետարանական պատմութիւնը իրական կեանքի մի մասն է։ Նրա սիլիլըր։

Մալաթիոյ Աւետարանի մանրանկարի քննուող առանձնայատուկութիւնները նա զբաղեցրել են իրենց եղբայրացիները ընդհանուր մտեցնում են մեզ մի կարեւոր հարցադրման, որը փր հերթին, առիթ տալով այլ եզրահանգումներին, հնարաւորութիւն է ընձեռում առաւելագույն չափով քաղաքներէ վրձնի մեծ վարպետի հրաշակերտի ներքին գեղարվեստական թովանդակութիւնը։

Ի՞նչ խնդիրներին, նպատակներին իրականացման է ծառայում պատկերազարկան կանոններին այսօրինակ ընտրութիւնը եւ դրանց մատուցման եղանակը։ Կասկածից վեր է, որ միջնադարեան արուեստի արտայայտմանից զինանոցից քաղելով յատկապէս տուեալ եւ ոչ ուրիշ օրինակաւ, ընտրւում առանձնայատուկութիւնները, նկարիչը դրանք ի մի է քերել, առաւել նպատակայարմար դրանելով իր մտայնացումը կենսազործելու տեսանկիւնից։ Նկատի առնելով պատկերի թաքուն փրկարափակաւորութիւնը, կարելի է պատկերացը նկել, թէ տեղծագործութեան ներքին ուրիշ լարուածութիւնը ապահովելու իմաստով՝ որքան համապատասխան էր ելարանի թեր դիրքը, առձանի տեսքով գերեզմանի մոտին ու մնացած մանրամասները։

Կանոնիկ ձեւական յատկանիշները միջոց են հանդիսանում մանրանկարի մէջ անտեսանելի, լարուած, շարժիչ «գապանակ» տեղեղծ-

74. WEITZMAN K., The Origin of the Threnos..., p. 479-480, fig. 4.

լու, խրատեսակ «բեմախորք» կառուցելու համար, որի օգնութեամբ արեւի արդեցիկ է դառնում առանձին կերպարների ներքին այնպիսիութիւնը: Անփորձ աչքի համար առաջին հայեացքից ոչ ընկալելի, ներքուստ անհանդիստ ու հակասական դժանկարը Վոյլ է տալիս արուեստագէտին օժանդակ «լիցքերի» միջնալայր արահովել, լրացնելու համար կերպարների դիմադժեքում յայտնուող խռովքը, առաւել չափով շիկացնելու տեսարանի մթնոլորտը:

Նիկողոսմոսի, քեւեռները հանող ծառայի, Մարիամի, Յովհաննէսի ևւ մանաւանդ Յովսէփի ապրումները այնքան փրական են, որ ակամարից մտածում ես, թէ Մալաթիոյ Աւետարանի մանրանկարում ծաւարում, թանձրանում է ոչ թէ միայն Գրիստոսի մահուան առիթով ծաղկողի գուտ կրօնական վիշտը եւ ողբը, այլ հարազատների, բարեկամների, սեփական ժողովրդի զաւակների կորուստը տեսած մարդու՝ Թորոս Ռոսլինի անձնական ցաւը: Գրիստոսի մերձաւորների դէմքերին դրոշմուած կակիձն ու յուսահատութիւնը ապրուած զգացմունքներ ան մեծ կիլիկեցու համար: Դա, հաւանաբար այն վիշտն է, որ այս պատկերը ստեղծելու պահին ապրում էր նկարիչը. մահացնել էր իր մեծանուն քաղաքը՝ Կոստանդին Ս. Բարձրբերդի կաթողիկոսը, իսկ մամուլները դէմ արեւահեղ ճակատամարտում զոհուել էր արքայորդի Թորոսը եւ դերի ընկել նրա եղբայր Լեւոնը: Այս դառնաղէտ իրադարձութիւնների մասին արուեստագէտը ցաւով յիշատակագրում էր Մալաթիոյ ձեռագրի էջերում, իսկ վրձինը ակետարանական թեմաների սահմաններուն ձեւ ու մարմին էր տալիս այդ ապրումներին:

Ուսչից իլեցնելուն եւ թաղմանը մասնակցող ռոսլինեան բոլոր կերպարները կարծես ճզմուած են կորստեան ցաւով՝ անընդունակ որեւէ ակտիւ գործողութեան: Նրանց հոգեվիճակին հակադիր է՝ ներկայացուած Յովսէփ Արիմաթեցու ողջ էութիւնը: Նրա դէմքի խռովքը այստեղ արտայայտում է ոչ միայն հարազատի անդառնալի կորստի հետ մարդու չհամակերպուելու վիճակն, այլեւ բողոք է թուած անարդար վախճանի սրէմ ու պայքարի կոչ՝ անժամանակ մահ բերող պատճառների սրէմ: Տեսարանի ողջ պայթուցիկ ոյժը խտացուած է Յովսէփի սրէմը: Նա հերոսական մի կերպար է, որ ծառանում է մարդուն դժբախտացնող քննութեան սրէմ: Յովսէփը կարծես լի է իր ուսուցչի գործը մենակ շարունակելու վճռականութեամբ: Արիմաթեցու կերպարի մեկնարանութեամբ՝ ռոսլինեան մանրանկարը յիշեցնում է հայկական միջնադարեան դրական ողբերը: Յովսէփի «ըմբոստացումը» համահնչուն է անէժքի ձեւով մահաառիթուակների մերկացման, դատապարտման եւ զրանց նկատմամբ դատաստան կարգալու երեւոյթին, որ ժողովրդական ողբից է թա-

փանցել զբաղանի մէջը⁷⁵։ Միայն զարմանալի կը լինէր, եթէ Թորոս Ռոսլինին անծանօթ մնար այս սկզբունքը, որը բնորոշ էր հայ ողբազրուեթեան անկերին, այդ թուով եւ ներսէս Շնորհալու ստղծագործութիւններին։ Պէտք էր ապասել, որ նկարելը իբրեւ արուեստագէտ կը վերարտադրի ոչ միայն հայ մանրանկարչութեան աւանդոյթները, այլեւ որեւէ ձեւով կ'արտացոլի քաղմադարեան մայրենի դրականութեան փորձը։ Յովսէփի կերպարի մեկնաբանութիւնը հնարաւորութիւն է տալիս կամրջել Ռոսլինի մանրանկարը հայ ողբարան յուշարձանների հետ, հետեւաբար նաեւ լրացուցիչ միջոցներ ստեղծում պատկերի ազգային նկարազրի մէջ խորանալու համար։ Արիմաթեցիին մեծանուն ծաղկողի հումանիստական դադափարների մարմնացումն է։ Նրա հերոսական պայթոսը թելադրուած է պատմական որոշակի շարժառեքներով։ Աւետարանական թեմայի սահմաններում, կրօնական շղարչի ներքոյ Ռոսլինի մանրանկարում դրսեւորուել են եզրիպտոսի մամլուքների ապապտակութիւնների դէմ կլիկեան հայութեան ազատատենչ հերոսական մաքառումների յուշը, անկերի անկախութեան պահպանման մտահոգութիւնը եւ ժողովրդի գոյութեան ապառնացող վտանգի կանխազգացումը։

Միջնադարեան մտածողները, օրինակ Յովհան Ոսկեբերանը մեկնաբանում էին փառչից իջեցման եւ թաղման իրադարձութիւնը պարզ ձեւով՝ նշելով, որ Յովսէփը այստեղ դրսեւորում է իր սէրն ու քաջութիւնը⁷⁶։ Ոսկեբերանի այս բացատրութիւնը պէտք է որ յայտնի լինէր անցեալի նկարիչներին, եւ նրանցից իւրաքանչիւրը իր կարողութիւնների չափով՝ ներկայացրել է Յովսէփի արարքի բարոյական վեհ կողմը։ Իսկ շատ քջերին է յաջողուել այդ կերպարի մէջ ախրան պատկերի ոյժ դնել, որքան որ դրել է Ռոսլինը։ Յովսէփի հոգեկան պոռթկումը միւս կերպարների ներաշխարհում կատարուող տեղատուութեանը հակադրելով, արուեստագէտը զգացմունքային հաւասարակշռութիւն է մտցնում տեսարանի մէջ։ Արիմաթեցուն նման ձեւով մեկնաբանելու շնորհիւ Ռոսլինի մանրանկարում թանձրացած պլաշտ՝ չի մղում դիտողին անծայր յուսահատութեան դիրկը։ Մալաթիոյ Աւետարանի պատկերի այս առանձնայատկութիւնը գալիս է ոչ միայն նկարչի լաւատեսութիւնից։ Այն համապատասխանում է քրիստոնէական եկեղեցու կողմից դարեր շարունակ պատգամուող հայեացքներին. հաւատացեալին Աստուծոյ զօրութեան նրկատմամբ անբուժեան եւ կասկածանքի մէջ չըձեւուլ համար Քրիստոսի մահուան ողբը բուռն պիտի չլինէր. այդպիսով միջնադարեան մարդու գիտակցութեան մէջ նրա խաչուելու, թաղուելու հետ մէկ-

75. ԽԱՉԱՍԻՆ Գ. Մ., Հայ միջնադարեան պատմական ողբեր, էջ 113:

76. MILLET G., Recherches..., p. 461.

տեղ՝ միշտ կը մնար նաեւ յարուժեան գաղափարը, որ դիտւում էր հանդերձեալ կիանքում՝ մեղաւոր հողիներէ պատժման եւ արդարնեբրի փրկագործման գրաւակներ:

Ողբի հետ «յուսոյ նուազը խառնելը» — ինչպէս մի քանի դար յետոյ կ'աւտէր բանաստեղծ Առաքել Միւնեցիին — որպէս սկզբունք, բնորոշ էր հայկական գրական երկերին⁷⁷, եւ այն որբեգրելով, Ռոսլինը մեզ հնարաւորութիւն է ընձեռում խնդրոյ առարկայ մանրանկարը՝ նորից զննել նոյն միջավայրի ծնունդ հանդիսացող՝ ողբաբանական բանաստեղծական յուշարձանների կողքին:

Շատ տարօրինակ կը ընէր, եթէ կիլիկեցի ծաղկողի աշխատանքում, որեւէ ձեւով շարտացոլուէին հայկական հանրայայտ ողբադրական ստեղծագործութիւնների սկզբունքները: Մեզ հետաքրքրող երեւոյթը հայ ազգային մտածողութեան արդիւնք է, նահատակութիւնը նկարագրելու ինքնատիպ ստեղծագործական մեկնակերպ: Անհրաժեշտ է յիշել, որ հայ ժողովրդի պատմական իւրայայտուկ ճակատագրի բերումով շատ մեծ է եղել մարտիրոսների թիւը, եւ դրանց նուիրումած վկայարանութիւնների քանակը:

Որպէս հայ մարդ, Ռոսլինը ջէր կարող շրիտել նահատակութիւնը որպէս «ազատագուրկ, հաւատացեալ մարդու զգիմարդութեան», վրիժառութեան վերջին միջոց: Նահատակութիւնը կրօնական շղարկով դրսեւորւող, տարբերային պայթարի մի ձեւ էր, որի հիմքում ընկած էր մարդու ազատասիրութիւնն ու հայրենասիրութիւնը⁷⁸: Մարտիրոսների նուիրումած գրական յուշարձանները հայկական միջնադարեան դիւցազնեպոստիան, հերոսական բանաստեղծութեան նմոյշներ էին⁷⁹:

Քրիստոսի խաչելութիւնը եւ նրա օրինակով նահատակների մարտիրոսութիւնը միջնադարեան հայ մարդկանց լոբաւնամբ՝ յատուկ իմաստ ունէր. որքան շատ էին այդ մարտիրոսների տառապանքները, այնքան մեծանում էր զոհուողի փառքը⁸⁰: Ուստի պատահական չէ, որ Ռոսլինի Քրիստոսին նկարում է գլուխը ետ գծած, այդպիսով շեշտելով նրա շարժարանները:

Որպէս ոչ միայն արուեստագէտ, այլեւ ընթերցող, այն էլ հայ ընթերցող Ռոսլինը ջէր կարող անհաղորդ մնալ իր շրջապատում ծընունդ առնող գրական երեւոյթների հանդէպ: Ո՞րքամուխ ընկելով Հին

77. ԽԱՋԱՏՐԵԱՆ Պ. Մ., Հայ միջնադարեան պատմական ողբեր, էջ 26:
78. ՅՈՎ ՀԱՆՆԵՍ ԿԱՐՆՅԵՒ, Տագարամ, աշխատասիրութեամբ Շ. Նազարեանի, Երևան, 1962, էջ 22:
79. ԽԱՋԱՏՐԵԱՆ Շ., Ներսէս Շնորհալու կերպարը միջնադարեան գեղարվեստական գրականութեան մէջ: — Հերթէս Շնորհալի (յօրուածների ժողովածու), Երևան, 1977, էջ 77:
80. ՄԱԿՈՆԵԱՆ Ա., Միջնադարեան հայկական պոէմը, էջ 72:

ու Նոր Կտակարանները բովանդակութեան, եւ իր պատկերներում մեկնաբանելով այդտեղ շարադրուող իրադարձութիւնները, նա իրենից անկախ արտացոլում էր նաեւ աստուածաշնչական բնադրի առանձնախտութիւնները: Իսկ ընթերցելով հայ դրականութեան ըստեղծադրածութիւնները, պրանց մէջ տեղ գտած ըմբռնումներն ու սկզբունքները վերարտադրում էր սեփական աշխատանքներում: Դրժուար է պատկերացնել, որ Մալաթիոյ Աւետարանի «Ուսչից իջեցումը» դիտողին ցնցէր նոյն չափով, եթէ չլինէին վարպետին կախարդէի գոյները: Ռոսլինի ներկայակցող այդ մանրանկարի «համար ընտրուած են ներկայացուող դրամատիկ իրադարձութեանը պատշաճող, գուռայ, գունային համադրութիւններ:

Առանց իսպառ քացառելու կարմիրը, ծաղկողը բոլորովին հրաժարուել է իր նախասիրած մեծ կարմրաւուն բծերից եւ հատուածներից: Ողբի տրամադրութիւնը ազդարարող խորհրդանշանի նման, այստեղ վեր է խոյանում շագանակագոյն խաչափայտը:

Չարագուշակ անյայտութեան ակնարկը կայ զերեգմանի քացուածքի մուգ կապոյտի մէջ:

Ողբացող Մարիամի եւ Յովհաննէսի հանդերձները խուլ կապոյտը եւ շագանակագոյնը առաւել քան նպատակայարմար են նրանց վիշտը հաղորդելու համար: Դա է պատճառը, որ դիտողը ընկալում է վերջիններիս սեւեր հաղած ազաւորների նման, թէեւ սեւ ներկը չի օգտադրժուած նրանց զգեստների վրայ: Այբօրինակ զբացողութիւնը արդիւնք է Մարիամի, Յովհաննէսի եւ նրանց շրջապատող միջավայրի երանգային հակադրութեան: Նրանք ցոյց են տրուած բաց վարդադոյն քարի, դեղնաւուն-նարնջագոյն թոււացող հողաշերտի, կանաչ խոտով ծածկուած գետնի, քաց կապտաւուն պատանքի հարեւանութեամբ: Այս մանրանկարում Ռոսլինը դիմում է գունային հակադրութիւններին, օգտուելով նաեւ «բախում» ստեղծելու այդ ձեւից: Գերեզմանի քացուածքի հատուածը, խաչափայտը, Մարիամի, Յովհաննէսի, Յովսէփի զգեստները՝ պատկերի ամենամուգ մասերն են: Նրանց արանքներում շեշտուած կերպով հանդէս են գալիս բաց գոյները: Անգամ Յովսէփի զգեստի կապոյտը, որ շատ մուգ չի թւում (թէեւ նրա համեմատ, ճիշտ կողքին, աւելի լուսաւոր կապոյտով է ներկուած Քրիստոսի ազդրակապը), հարեւանութեան մէջ է Նիկողեմոսի հագուստի բաց վարդագոյնի հետ եւ դրանից առաջանում է գունային հակադրութեան զբացողութիւնը:

Նիկողեմոսի եւ բեւեռները քաշող ծառայի հանդերձները համեմատաբար բաց գոյներով՝ այսինքն՝ նուրբ վարդագոյն եւ կանաչ ներկելով, նկարիչը այդ կերպով միջոց է գտնում նրանց՝ որպէս վեհ գաղափարին նուիրուած մարդկանց էութիւնը արտայայտելու համար: Ըստ երեւոյթի, մի յատուկ իմաստ կայ Քրիստոսի պատանքի

եւ ազդերակապի վրայ բաց կապոյտները կիրառման հարցում: Դրժուար չէ նկատել, որ այդ մանրամասները Ռոսլինի ստեղծագործութեան ամենալուսաւոր հատուածներն են: Կիրիկեցի ծաղկողը, հաւանաբար այդ դոյնը ընտրել է՝ ակնարկելու համար Գրիստոսի բուրդից աւելի անմեղ, անապական էութիւնը:

Վրձնի վարպետի մտածողութիւնը այստեղ յիշեցնում է միջնադարեան հայկական վկայաբանական տաղերի հեղինակների ըմբռնումները: «Գրիստոնէական հաւատի խորհրդանիշը» հանդիսացող լոյսը՝ առատօրէն գործածւում է նրանց երկերում, որպէս «նահատակների սրբութեան ամենաակնյայտ նշան»⁸¹: Այս երեւոյթը գալիս է քրիստոնէական մատենազրութեան գունարին խորհրդանշական մտածողութիւնից⁸²: Սակայն պարտադիր չէ, որ Գրիստոսի պատանքը եւ ազդերակապը առաւել լուսաւոր երանգներով հաղորդելիս Ռոսլինը հաւատարիմ դոնուէր վկայաբանական յուշարձանների ըսկզբունքներին: Չպէտք է բացառել, որ զբաղւած օրինաչափութիւններին համապատասխան՝ գոյութիւն ունենալին գունային որոշակի կանոններ, որոնք կարող էին ուղեցոյց լինել նկարչին: Ըստ երեւոյթին, Ռոսլինը հմտօրէն օգտուել է նման կանոնների ընձեռած հնարաւորութիւններից՝ Մալաթիոյ Աւետարանի մանրանկարի դունչարի հաղորդման հարցում:

Որոշակի օրինաչափութեան է հետեւել Ռոսլինը՝ գերեզմանաքարը բաց վարդազոյն պատկերելու: Այդպէս է նա ներկայացրել նոյն մանրամասնը՝ Մալաթիոյ Աւետարանի մէկ այլ ձեւաւորման («Հրեշտակի յայտնութիւնը իւղարերներին») մէջ:

Ողջ գունաշարում, ամէնից աւելի օգտագործուած են կապոյտի տարբեր երանգները: Այդուհանդերձ մանրանկարի մէջ իշխողը, առաւել մեծ մակերես զբաղեցնողը՝ ոսկեծածկ հատուածն է, որի տարբեր մասերը փայլելով, միտիկ խորհրդաւորութիւն են հաղորդում պատկերի ընդհանուր, առանց այն էլ ողբերգական հնչեղութեանը:

Ռոսլինեան խնդրոյ առարկայ հրաշակելուի նկարագրութիւնից երեւում է, որ Մալաթիոյ Աւետարանի «Ուաչից իջեցման», գունային տրամաբանութիւնը կատարելապէս ներդաշնակ է ստեղծագործութեան եւ գծային յորինուածքի հետ:

Թւում է թէ, այս յուշարձանն աւարտելուց յետոյ, վարպետի միտքը այլեւս չպիտի զբաղուէր «Ուաչից իջեցման» պատմութեամբ. ի վերջոյ ստեղծուած էր բացառիկ, իր պատկերագրական «երկուրեակը» չունեցող մի պատկեր:

81. ՄԱԴՈՅԱՆ Ա., Աշ. աշխ., էջ 78:

82. Նոյն տեղում:

Գննուող թեմայով կատարուած ուսումնական չորրորդ արշխատանքը (Ա՛կ. 4)՝ Վասակ իշխանի Աւետարանի (Վաչինգտոն, Ֆրիք Արուեստի Պատկերարահ, թիւ 32.18) նկարազարդումը⁸³ (էջ 323ա), վկայում է ոչ թէ արուեստագէտի նախորդ ձեւաւորումների յորինուածքի յետադէպ զարգացման մասին, կամ յայտնի թեմայի մարմնաւորման նոր ձեւեր որոնելու վերաբերեալ: Չորրորդ «Նաչից իջեցումը» իր կառուցութեամբ խիստ տարբերում է վերը քննուած նրկարազարդումներից: Այս մանրանկարի հիմքը կազմող կերպարները, նրանց տեղադրութիւնը, կեցուածքները, շարժումները՝ ծանօթ են տասնեակ ուրիշ երկերից:

Կարելի է անգամ մտածել, թէ յիշեալ ստեղծագործութեան հեղինակը ոչ թէ Ռուրիկն է, այլ նրա մի աշակերտը: Անհրաժեշտ է նշել, որ Ֆրիքի մատենանի թուականը եւ նկարչի անունը ինչ-ինչ պատճառներով չեն պահպանուել յիշատակարաններում: Իր վերջին արշխատութիւնների մէջ Ս. Տէր-Ներսէսեան նշում է, որ այդ ձեւաւորը նկարազարդել է Թորոս Ռուրիկը եւ այն պէտք է համարել նրա վերջին արշխատանքը⁸⁴:

Մեզ հետաքրքրող մանրանկարում, ի տարբերութիւն վարպետի նախորդ երկերի, ներկայացուած է միայն «Նաչից լիցեցման» դրուագը, առանց «Թաղման» տեսարանի: Վերջինս նկարուած է Ռուրիկի ձեռագրի մէկ այլ մասում որպէս ինքնուրոյն պատկեր (էջ 192բ): Ստեղծագործութեան կենտրոնը գտաւում է յաշարատը, որին յենուած ելարանի վրայ ցոյց տրուած Քրիստոսի իրանի վերին մասը՝ դրկած Յովսէփը: Չախից նկարուած է Մարիամը, որդու ցած կախուած աջ ձեռքը համբուրելիս: Նրա կողքից կանգնած են Մարիամ Մաղաղիկացին եւ միւս Մարիամը: Մանրանկարի աջ մասում տեսանելի է մէկ այլ ելարանի վրայ բարձրացած Նիկողեմոսը՝ ուսուցչի ձեռքի քեւեռը դուրս քաշելու պահին: Այստեղ Նիկողեմոսի դաստակները եւ այլ մանրամասները չեն երեւում, որովհետեւ պատկերը վերելից մասամբ կտրուած է:

Քրիստոսի գլուխը եւ մարմնի վերեւի հատուածը թեքուած է կողքի վրայ՝ ձախ, եւ նրա ընկնող, ուժասպառ տիրքին՝ նկարիչը հակադրել է Յովսէփի ակտիւ, բուռն շարժումը:

Տեսարանի նկարազարդութիւնից երեւում է, որ հեղինակը դուրս է թողել Յովհաննէս աւետարանչի կերպարը: Այս ստեղծագործութեան առիթով Ս. Տէր-Ներսէսեան նշում է. «Առանձին դէպքերում հին պատկերազարդական նախորինակը մի կողմ է մղուում, յօգուտ

83. DER NERSESSIAN S., *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, p. 29, 33, 46, fig. 126.

84. Տե՛ս նոյնի, *Armenian Manuscripts in the Walters Art Gallery*, p. 15; IDEM, *L'Art Arménien des origines au XVII^e siècle*, p. 138.

Ժամանակակից կամ փոքր-ինչ վաղ բիւզանդական նմոշները»⁸⁵։ Արուեստագետը նկատի ունի, որ հին հայկական յուշարձանների առանձնալատութիւնները այստեղ չեն արտացոլուել, եւ Ռոսլինի քննուող մանրանկարի համար օգտագործուած է բիւզանդական պատկերադրական նախափայլը, որի օրինակների մեծ մասում՝ խաչի մի կողմից ցուցադրուում է Յովհաննէսը։ Այս կապակցութեամբ Ս. Տէր-Ներսէսեանը յիշատակում է Ֆլորենցիայի Լաուրենցեան դարադրանի ժԱ. դարի բիւզանդական Աւետարանի երեք մանրանկարները, որոնք պատկանում են այդ տիպին, բայց Յովհաննէսի կերպարը չեն ընդգրկում⁸⁶։

Այդ օրինակները արդէն մատնանշում են, որ Յովհաննէսի կերպարից զուրկ «Ճաչից իջեցման» յօրինուածքը Ռոսլինի հնարածը չէ։ Այս տեսարանում աւետարանիչին ընդգրկելուց հրաժարուում են՝ ոչ միայն Լաուրենցեան դարադրանի ձեռագրի բիւզանդական մանրանկարիչները⁸⁷։ Բայց այս տիպի պատկերադրութիւնը վաղ միջնադարեան արուեստում հազուադէպ է ներւան դալիս, եւ մեզ հետաքրքրող առումով Ֆլորենցիայի մատնանը բիւզանդական միակ յայտնի նմոշն է⁸⁸։

Արեւելեան յուշարձաններից նոյն առանձնալատութիւն ունի եւ 1250 թ. դպտական Աւետարանի (Փարիզ, Կաթողիկէ ինտիտուտ, դպտ.—արաբ. 1) մանրանկարը⁸⁹։ Համանման կանոնիկ յօրինուածքով պատկերներ են հանդիպում ժԱ. դարի փայլական, յարուր հարիւրամեակի երկրորդ կէսի գերմանական ձեռագրերում, իսպանական ռոմանական քանդակագործութեան մէջ եւ ԺԳ. դարի Փրանսիական, շեքսպիրական մատնանկարում⁹⁰։

Անհրաժեշտ է նկատել, որ այս տիպի պատկերադրութիւնը ծագում է պարականոն աղբիւրներից, որոնք մասսայականութիւն էին վայելում բիւզանդական հեղինակների շրջանում։ Յովհաննէս չի յիշուում «Ճաչից իջեցմանը» վերաբերող այնպիսի երկերում, ինչպիսիք են Նիկոլեմոսի պարականոն աւետարանը, յունական հեղինակներ Գէորգ Նիկոմեդացու (Թ. դար), Սիմոն Մետափրաստեսի (Ժ. դար) բնագրերը եւ ԺԲ-ԺԳ. դդ. լատիներէն առանձին ստեղծագործու-

85. IDEM, *Armenian Manuscripts in the Freer Gallery of Art*, p. 46.

86. Նոյն տեղում, ծանօթ 110: MILLET G., *Recherches...*, fig. 527-529; VELMANS T., *Le Tétraévangile de la Laurentienne*, fig. 96-98.

87. MILLET G., *Recherches...*, fig. 527-529; VELMANS T., *Le Tétraévangile de la Laurentienne...*, fig. 96-98; RATKOWSKA P., *The Iconography...*, p. 314, n. 18.

88. RATKOWSKA P., *The Iconography...*, p. 314, n. 18, p. 315.

89. MILLET G., *Recherches...*, fig. 504; RATKOWSKA P., *The Iconography...*, p. 314, n. 18.

90. RATKOWSKA P., *The Iconography...*, p. 315, fig. 37c, 37d.

թիւնները: Բիւզանդական աշխարհում զարգացում ապրելուց յետոյ՝ այլ աւանդոյթը անցել է Եւրոպա եւ արտացոլուել գրականութեան ու արուեստի օրինակներում⁹¹:

Գեղարուեստական յիշեալ երեւոյթների հետ, Ռոսսիինի հաղորդակցութիւնն է մատնանշում արուեստի տիրահարի համար գուցէ ոչ մի նշանակութիւն չներկայացնող Յովհաննէսի կերպարի անտեսումը: Հայ նկարչին անկասկած քաջ յայտնի են երբէլ անտարանչին չընդդրկող ստեղծագործութիւնները: Վասակ Իշխանի ձեռագրի պատկերի քննութեան կապակցութեամբ կարելի է նշել մի քանի երկեր եւս, որտեղ Յովհաննէսի կերպարը անտեսուած է: Դրանցից են Լոնդոնում Վիկտորիա եւ Ալբերտ թանգարանի քանդակը, ԺԱ. դարի Իտալական ձեռագրի (Վատիկան, Առաքելական գրադարան, MS. Pal. lat. 830) ձեւաւորումը, Հոենոսեան զպրոցի աշխատանք համարուող ԺԲ. դարի երկրորդ կէտի Այոթթագրքի (Միւնխէն, Բաւարական գրադարան, լատ. 935) պատկերը⁹², որտեղ ի դէպ «Սաչից իջեցումը» եւ «Թաղումը» նկարուած են նոյն վըի վրայ, իրար տակ եւ առնուած ընդհանուր շրջանակի մէջ, մի հանգամանք՝ որ յիշեցնում է Ռոսսիինի վերը քննուած ստեղծագործութիւններէ բնոյթը: Տրիբի Աւետարանի մանրանկարի ուշագրաւ առանձնայատկութիւններէց են երկու Մարիամների կերպարները կոյսի կողքին: Յովհաննէսին անտեսող վերը նշուած երկերում՝ նրանք նկարուած չեն: Մարիամների ներկայութիւնը Ռոսսիինի աշխատանքում քացատրուում է ԺԱ-ԺԲ. դարերում «Սաչից իջեցման» թեմայի պատկերագրութեան յետագայ զարգացմամբ:

Այլ ժամանակաշրջանի յուշարձաններում կորստի ցարը եւ դրամայի ծանրութիւնը շեշտելու նպատակով՝ նկարչները ներկայացնում են Մարիամին երկու իւզաբեր կանանց ուղեկցութեամբ⁹³: Սգացող կանանց կերպարները ընդգրկուած են ԺԱ. դարի քիւզանդական նշանաւոր Աւետարանի (Փարիզ, Արգային գրադարան, յուն. 74) եւ ԺԲ. դարի վրացական Գեղթի Աւետարանի (Թբիլիսի, Հին ձեռագրերի ինստիտուտ, Q-908) մանրանկարներում⁹⁴:

Պարզ է, որ տեսարանի զգացմունքայնութիւնը աւելացնելու նըպատակով է Ռոսսիինը պատկերի մէջ աւելացրել Մարիամներին: Տրիբի Աւետարանի նկարագրումն, եւ վարպետի միւս աշխատանքների առիթով նշուած յուշարձանները, հնարաւորութիւն են ընձեռում նախ եւ առջ տեղադրել Ռոսսիինեան մատուցները՝ միջնադարեան արուեստի պատմութեան որոշակի օղակներում, քացայայտել

91. Նոյն տեղում, էջ 315-317:

92. Նոյն տեղում, էջ 312-315, նկ. 37a, 37c, 37d:

93. MILLET G., Recherches..., p. 471.

94. VELMANS T., La Peinture Murale Byzantine..., fig. 118.

գեղարուեստական արյն օրինաչափութիւնները, երեւոյթները, որոնց հետ առնչուել են քննուող երկերը, այլ կերպ ասած՝ դռնել նկարչին շրջապատող ստեղծագործութիւնների աշխարհը կամ հնարաւորին չափ մօտենալ գեղադէտական այդ միջավայրից պահպանուած նմոյշներին: Միայն յիշեալ օրինակների հետ համեմատելու միջոցով կարելի է պարզել ռուսլինեան մանրանկարների ինքնատուլթիւնը եւ ազգային մտածողութեան դրսեւորման իւրայատուկ ձեւերը:

Կողք-կողքի դնելով վարպետի «Ուաչից իջեցումը» ներկայացնող պատկերները, տեսնում ենք, որ դրանց շարքում բացառիկ յորինուածքով, առանձնանում են 1261 թ. Սեբաստիոյ եւ 1268 թ. Մալաթիոյ Սեւտարանների ձեւաւորումները: Այս երկու ստեղծագործութիւնները իրենց արժանիքներով զանազանում են տարբեր դարերի նոյն թեմայով ստեղծուած տասնեակ յուշարձաններից: Անկրկնելի է յատկապէս Մալաթիոյ Սեւտարանի պատկերը: Այդ հրաշակերտը երփնադրելիս թորոս Ռուսլինի վրձինը առաջ է մղուել նրա հայրենասիրութեան ուժով Բւ. Կրկնել մանրանկարի արտակարգ կենսական ճշմարտացիութիւնը, որ կախարդում է դիտողին, տեղափոխում նրան նկարչի ապրումների աշխարհը: Այս ստեղծագործութեան ողբերգական, ցնցող պատիժը՝ ոչ թէ սոսկ աւետարանական բնազիրը ընթերցող եւ կարդացած պատմութեամբ յուզուող մարդու մտածողութեան արդասիքն է, այլ փայլուն արուեստագէտի մարդասիրութեան եւ հայրենասիրութեան վեհ գաղափարներով այրուելու արդիւնք:

Սնդրոյ առարկայ թեման իւրատեսակ փորձաքար է, որ ցոյց է տալիս, թէ արուեստագէտը ինչպէս է ընկալում մարդկային ողբերգութիւնն ու վախճանը շնորհանրապէս: «Ուաչից իջեցումը» պատկերող ռուսլինեան երկերը առանցքային նշանակութիւն ունեն անզուգական Երփնադրողի արտակարգ վարպետութեան իրական աստիճանը պատկերացնելու տեսակէտից: Դրանք թորոս Ռուսլինի կարեւոր աւանդն են ինչպէս հայ, այնպէս էլ համաշխարհային արուեստի զանաճարանը:

ԼԵՒՈՆ ԶՈՒԳԱՍԶԱՆ

Résumé

ÉPISODES DU PATRIMOINE DE T'OROS ROSLIN

LEVON TCHOUGASZIAN

L'auteur étudie et analyse dans les moindres détails le génie du célèbre miniaturiste cilicien, T'oros Roslin. Parmi l'œuvre considérable de ce grand maître, on ne compte que quatre Dépositions de croix.

L'auteur commence par préciser qu'avant Roslin les miniaturistes orientaux et occidentaux avaient souvent les mêmes thèmes d'inspiration. En suite, il s'efforce d'expliquer en quoi consiste l'originalité de Roslin.

D'autre part, l'auteur suppose que T'oros Roslin vit maintes miniatures byzantines et s'en inspira. Il pense aussi qu'il eut, à ses débuts, des contacts avec certains maître-miniaturistes italiens. D'une très belle manière, l'auteur interprète les quatre Dépositions de Roslin, dont les trois premières datent respectivement de 1263, 1265 et 1268. La quatrième Déposition de Roslin qui nous soit parvenue n'a pas de datation.

Il explique longuement et avec minutie les quatre œuvres magnifiques de Roslin disant, par exemple, qu'il perçoit, à travers les «pleureuses», une très ancienne coutume nationale; ou bien qu'il note la ressemblance de certains de ses motifs, avec l'art païen du ciselage.

De la façon dont Roslin dépeint la souffrance et la peine, l'auteur déduit que ce dernier devait avoir une profonde connaissance de la littérature et de la culture grecques.

L'auteur accomplit scrupuleusement la description de chaque miniature, en donnant toutes les explications et toutes les clarifications nécessaires. Il explique même leurs points les plus obscures souvent délaissés ou ignorés de nombreux connaisseurs. Nous pouvons citer ici le personnage de Joseph d'Arimathie, qui, dans l'esprit de Roslin, représente avec son visage tourmenté, le type même de l'Arménien souffrant, ou encore, tout le peuple cruellement martyrisé.

Il révèle pour finir le secret des couleurs et des tons particuliers des miniatures de T'oros Roslin et déduit que ce dernier devait avoir une forte perception artistique, une sensibilité très fine et le sens de la patries.